

## Էջմիածինը Կրնայ Թուրքիայէն Պահանջել Բռնագրաւուած Սեփականութիւնը

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը կրնայ նոյնպէս թուրքիայէն պահանջել՝ վերադարձնել եկեղեցիէն բռնագրաւուած սեփականութիւնը: «Ամերիկայի Ձայն» ռատիոյին տուած հարցազրոյցի ընթացքին պատասխանելով հարցին, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ. ըսած է, որ ներկայիս պատմաբաններ ու իրաւաբաններ կ'աշխատին այս հայցի վրայ:

Հայ Առաքելական եկեղեցւոյ Մեծի Տան Կիլիկիոյ կաթողիկոսարանը եւ Երուսաղէմի ու Պոլսոյ պատրիարքութիւնները արդէն իսկ դատական հայց ներկայացուցած են՝ թուրքիայէն պահանջելով վերադարձնել իրենց սեփականութիւնը:

«Մենք հաւատում ենք, որ այս խնդրի բարձրաձայնումը պէտք է հասանելի դառնայ աւելի լայն շրջանակներին, թուրքիայի ազգաբնակչութեանը՝ դատապարտելով դատակցութիւն գործուած ցեղասպանութիւնը եւ պահանջելու, որպէսզի թուրքիան ինքը ճանաչի Հայոց ցեղասպանութիւնը, նաեւ արձագանգի մեր ժողովրդի պահանջատիրութեանը: Մենք հաւատում ենք, որ թուրքիան այլընտրանք չունի», - ըսած է Գարեգին Բ.-ն:

## Ամերիկայի Փոխ-Նախագահը Ներկայ Եղաւ Ուաշինկթընի Մէջ 100-Ամեակի Արարողութեան Հնչակեան Կուսակցութիւնը Պատուիրակութեամբ մը Մասնակցեցաւ Միջոցառումներուն

Մայիսի 7-էն սկսեալ յաջորդող երեք օրերու ընթացքին ԱՄՆ-ի մայրաքաղաք Ուաշինկթընի մէջ տեղի ունեցան Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցի եզրափակիչ միջոցառումները, մասնակցութեամբ Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսիսեանի, արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալպանտեանի, ինչպէս նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.ի եւ Կիլիկիոյ կաթողիկոս Արամ Ա.ի:

Ուաշինկթընի Մայր Տաճարին մէջ տեղի ունեցած միջարանուանական ոգեկոչման արարողութեան, ուշագրաւ էր ներկայութիւնը ԱՄՆ-ի փոխ նախագահ Ջօ Պայտնի:

Այս առթիւ, եռօրեայ այցելութեամբ մայրաքաղաք Ուաշինկթըն մեկնած էր ժամանած էր Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան պատուիրակութիւնը, որուն մաս կը կազմէին ընկերներ Վազգէն Գալթազեան, Խաչիկ Քէչիշեան, Գաբրիէլ Մուրչեան, Տօքթ. Արշակ Գազանճեան եւ Թադէոս Քէօրօղլեան:

Նախագահ Սարգսիսեան Ուաշինկթընի մէջ օգտակար հանդիպումներ ունեցաւ ծերակուտի՝ մեծամասնութեան հանրապետական



Արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալպանտեան, Նախագահ Սերժ Սարգսիսեան, ԱՄՆ-ի փոխ նախագահ Ջօ Պայտնի եւ ՄԱԿ-ի մօտ Ամերիկայի դեսպան Սէմէլթա Փաուլըրը

ղեկավար Միչ ՄըքԲանլիի եւ Դեմոկրատ փոքրամասնութեան ղեկավար Հէրի Ռիտի, ինչպէս նաեւ այլ ծերակուտականներու հետ: Նախագահը շնորհակալութիւն յայտնեց անոնց հայ-ամերիկեան համագործակցութեան ծիրէն ներս իրենց

ցուցաբերած առանձնապատուկ վերաբերումին համար:

Սերժ Սարգսիսեան պատմական նշանակութիւն ունեցող հանդիպում մը ունեցաւ նաեւ ԱՄՆ-ի

Շաբ.ը էջ 5

## Իրանի նախագահ Ռոհանի. «Հայաստանի Հետ Յարաբերութիւններու Ընդլայնման Համար Արգելքներ Չկան»

Իրանի նախագահ Հասան Ռոհանին թեհրանի մէջ Հայաստանի նորանշանակ ղեսպան Արտաշէս Թումանեանի հետ հանդիպման ժամանակ կոչ ըրած է ընդլայնելու երկկողմ յարաբերութիւնները Հայաստանի հետ, կը հարդորէ «Ֆարս» գործակալութիւնը:



«Թեհրանի եւ Երեւանի միջեւ յարաբերութիւններու ընդլայնման համար հաւատարմագիրը կը յանձնէ նախագահ ոչ մէկ խոչընդոտ Ռոհանիին չկայ», - Մայիս 12-ին կայացած հանդիպման ժամանակ ըսած է Ռոհանի:

Իրանի նախագահը յայտարարած է, որ իրանն ու Հայաստանը միջազգային կառուցներու մէջ համագործակցութեան օրինակելի մակարդակ ունին:

Ան նաեւ յոյս յայտնած է, որ իրանի եւ հայաստանի միջեւ յարաբերութիւնները կ'ընդլայնուին,

Հայաստանի դեսպանի նշանակմամբ:

Իր հերթին, ՀՀ ղեսպան Արտաշէս Թումանեան ըսած է, որ կ'ընէ հնարաւոր ամէն բան, հայ-իրանական յարաբերութիւնները ամրապնդելու ուղղութեամբ: Ան յայտարարած է, որ Հայաստանն ու իրանը պատրաստ են ընդլայնել համագործակցութիւնը:

## Հայաստանի Կառավարութիւնը Առաջնադաս Կը Նկատէ Սուրիահայութեան Փրկութեան Հարցը

Սուրիական պատերազմի չորս տարիներու ընթացքին, առաջին անգամ ըլլալով Հայաստանի կառավարութիւնը կը յայտարարէ՝ առաջնահերթ է ոչ թէ համայնքի պահպանման, այլ սուրիահայութեան փրկութեան հարցը:

Սփիւռքի նախարար Հրանտշ Յակոբեան «Ազատութեան» ռատիոկայանին տուած հարցազրոյցի ընթացքին ըսած է թէ, արդէն իսկ ժամանակավրէյ է խօսիլ գաղութի հետագայ պահպանման մասին, երբ տեղի վրայ վիճակը երթալով կը վատթարանայ:

«Արդէն, ցաւօք սրտի, շատ բան է կորսուած, սրանք վերջին յուսահատական ճիչերն են: Իհարկէ, շատ լաւ կը լինէր, որ այնտեղ հանգստութիւն, խղճողութիւն լինէր, համայնքը վերագտնէր իրեն, բայց ցաւով եմ ասում՝ այսօր աւելի բացասական է իմ կարծիքը համայնքի լիաթոք գործունէութեան առումով: Կարծում եմ՝ երբ խնդիրը կեանքի եւ մնացած հարցերի միջեւ է, իհարկէ, կեանքը պէտք է փրկել, կեանքից աւելի թանկ բան չկայ», - ըսած է նախա-

րարը:

Հայկահայութեան հարցը բարձրացուց նաեւ վարչապետ Յովիկ Աբրահամեանը՝ ընդգծելով, որ անհրաժեշտ է տեղահանել Սուրիոյ մէջ մնացած հայ երեխաները:

Նախարար Յակոբեանի համաձայն, Հայաստանի կառավարութիւնը պէտք է ելքեր գտնէ՝ օգտակար ըլլալու անոնց, որոնք ցանկութիւն ունին դուրս գալու պատերազմական գոտիէն: Նախարարն ըսած է որ, աջակցութեան ուղիները քննարկման ենթակայ են:

«Գումար ուղարկելն ամենահեշտն է: Այստեղ խնդիրը հետեւեալն է՝ արդեօք օգնաւի անվտանգութեան հարցերը ռեւէ մէկը կը վերցնի՝ իր վրայ, կ'ապահովի՝ օգնաւի թուիչքը: Դա արդէն ես չեմ կարող ասել, Արտաքին գործերի, Արտակարգ իրավիճակների նախարարութիւնները պէտք է սրա պատասխանը տան: Պէտք է տրուի իրավիճակի գնահատականը: Սա բոլորիս, կառավարութեան, պատկան կառուցների խնդիրն է, սա մէկ կառուցի խնդիրը չէ», - ըսած է Հրանտշ Յակոբեան:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Սերժ Սարգսեանի Յե՞տ, Թե՞ Նրանից Յետոյ

ԵՂԻԱԶԱՐ ԱՅՆԹԱՊՑԻ

Սահմանադրութեան փոփոխութիւններէ մասնագիտական յանձնաժողովի անդամ Վարդան Պողոսեանը «Ազատութիւն» ռատիոկայանին ասել է, որ յանձնաժողովը յանգում է խորհրդարանական կառավարման մոդելի տարբերակին: Միեւնոյն ժամանակ Պողոսեանն ասել է, որ քննարկումներ են լինելու Վենետիկի յանձնաժողովի հետ, իսկ վերջին խօսքը լինելու է Սերժ Սարգսեանինը, որն իր պատկերացրած տեսքով է նախագիծը ներկայացնելու Աժ: Վարդան Պողոսեանն ասել է, որ քննարկումներ են գնում ՀՀ նախագահի, Աժ-ի եւ կառավարութեան վերաբերեալ դրոյթներէ շուրջ:

Վարդան Պողոսեանի յայտարարութիւնը վկայում է, որ Հայաստանի սահմանադրական փոփոխութիւններէ հարցում, այսպէս ասած, մասնագիտական աշխատանքներն, ըստ էութեան, աւարտուած են, եւ այստեղ մասնագէտներն այլեւս, այսպէս ասած, անելիք չունեն, եւ խնդիրը քաղաքական դաշտում է: Ասել է թէ՛ խնդիրը իշխանութեան լիազօրութիւններէ բաժանումն է, թէ՛ ինչ լիազօրութիւններ են ունենալու նախագահը, Աժ-ն եւ կառավարութիւնը՝ վարչապետը: Այս տեսանկիւնից, նոյնիսկ խորհրդարանական կամ կիսանախագահական կառավարում ասուածը դառնում է յարաբերական, քանի որ քաղաքական քննարկումները երեւի թէ տեղի են ունենում այսպէս ասած սահմանակից եզրերի սկզբունքով, եւ ըստ երեւոյթի համաձայնութիւնը յանգելու է, այսպէս ասած, խճանկարային մի պատկերի, երբ նոյնիսկ խորհրդարանական մոտելի պարագայում կը մնայ բաւական ազդեցիկ նախագահական ինստիտուտ:

Այսպէս, թէ այնպէս, ակնյայտ է, որ քաղաքական այդ քննարկումները, կամ աւելի ճիշտ ներխանական քննարկումները կը շարունակուեն դեռ երկար եւ բաւական բարդ, որովհետեւ ընդհանուր ներերկրային իրավիճակն է ինքնին բարդ է, եւ այդ տեսանկիւնից դժուար է լինելու գալ ընդհանուր յայտարարի կարճ ժամանակում: Այդ ընթացքում, իհարկէ, կը լինեն քաղաքական դաշտ նետուող տարաբնոյթ մեսիջներ, միգրացիէ, այսպէս ասած, ապակողմնորոշող, շեղող տեղեկատուութիւններ, որով Սերժ Սարգսեանը կը փորձի կառավարել գործընթացն ու բանակցութեան դաշտ բացել տարբեր ուժերի համար: Առայժմ ոչ մի քաղաքական ուժ չստակ չի արտայայտուել փոփոխութիւններէ մասով, եւ բոլորը սպասում են նախագիծին, այլ կերպ ասած՝ սպասում են այն գնին, որ Սերժ Սարգսեանը կ'առաջարկի փոփոխութիւններէ իր տարբերակին լոյսալուծեան դիմաց: Իհարկէ, Սարգսեանի համար նաեւ ոչ բոլոր ուժերի լոյսալուծիւնն է գերնպատակ կամ կարեւոր, ինչի մասին վկայում է օրերս էդուարդ Շարմազանովի յայտարարութիւնը, որ

կոնսոլիդացիա չի նշանակում, որ բոլորն են համաձայն Սահմանադրութեան փոփոխութեան միեւնոյն տարբերակին:

Այսպէս, թէ այնպէս, ակնյայտ է, որ 2017-18 փուլից առաջ խնդիրը յանգում է իշխանութեան վերաբաժանմանը, եւ այստեղ, իհարկէ, ներխանական շահագրգիռ կողմերը, իմբերը մի քանիսն են: Սերժ Սարգսեանն այլեւս իրաւունք չունի առաջադրուել նախագահի պաշտօնում, սակայն ցանկանում է մնալ: Ներխանական մի շարք շերտեր կան՝ եւ ներկայումս գործող իշխանութեան մէջ, եւ գործող իշխանութիւնից դուրս, բայց համակարգում նշանակալիօրէն ներկայացուած՝ ինչպէս Ռոբերտ Քոչարեանը, եւ նաեւ տնտեսական դաշտում մեծ ներդրումներ ծաւալող, որոնք բնակարանաբար չեն կարող իրենց ներդրումները թողնել բախտի քմահաճոյքին եւ ներգրաւուած կը լինեն իշխանութեան ձեւաւորման ներկայիս փուլում:

Այս բոլոր շերտերի համար, բնականաբար, կարեւոր է, թէ ինչ է լինելու Սերժ Սարգսեանից յետոյ, կամ ընդհանրապէս Սերժ Սարգսեանը յետոյ լինելու է, թէ՞ Սարգսեանը մտադիր է մնալ ինչ-որ կերպ եւ դրա համար էլ փոխում է Սահմանադրութիւնը:

Իշխանութեան առաջին դէմք դառնալու հաւակնութիւններ ունի Յովիկ Աբրահամեանը, միգրացիէ եւ այդ հաւակնութեանը հրաժեշտ չի տուել Ռոբերտ Քոչարեանը եւ փորձում էր հենց դա ցոյց տալ Մայիսի 9-ին այցելելով Արցախ, ընդ որում՝ Սերժ Սարգսեանի բացակայութեամբ: Իհարկէ, փետրուարեան իրադարձութիւնները առաջին հերթին մեծ հարուած էին հենց Ռոբերտ Քոչարեանին, սակայն նա, իհարկէ, միգրացիէ այս պահին Սերժ Սարգսեանի, այսպէս ասած, առաջին մրցակիցը չէ, սակայն շարունակում է համակարգում լինել իշխանութեան ձաւարագրով շահագրգռուած կարեւոր անձանցից մէկը: Անկասկած է, որ այսպէս, թէ այնպէս, իշխող համակարգի իւրաքանչիւր սեգմենտ առնուազն փորձում է իշխանութեան նոր վերադասաւորման, վերարտադրութեան նոր փուլում ստանալ առնուազն հնից ոչ պակաս դիրքեր, ինչը ընդհանուր առմամբ նշանակում է, որ նուազագոյն խնդիրը բոլորի համար այն է, որ անգամ սահմանադրական փոփոխութիւններէ պարագայում պահպանուեն իշխանական թեւերի այնպիսի լիազօրութիւններ, որոնց արդիւնքում առանցքային կը մնան իշխանութեան մէկից աւելի կէտեր՝ սրանով իսկ թոյլ չտալով միանձնեայ կամ մոնոլիտ իշխանութեան սահմանադրական ամրագրում եւ պահպանելով որոշումներէ կայացման ներխանական միւսն այժմ եղած, այսպէս ասած, «կոլեգիալ» տրամաբանութիւնն ու մեխանիզմը, որն, իհարկէ, գործում է Սահմանադրութեան տրամաբանութիւնից դուրս:

«ԺԱՄԱՆԱԿ»

Բոլոր Յաղթանակներից Կարեւորը

ԹԱՄԱՐ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Մայիսը յաղթանակների ամիս է: Հայերս Լեռնային Ղարաբաղի պաշտպանութեան բանակի, Շուշիի ազատագրման օրն ու Հայրենական մեծ պատերազմում տարած յաղթանակի 70-րդ տարեդարձն ենք նշում:

Հայրենական մեծ պատերազմում տարած յաղթանակի 70-րդ տարեդարձն այսօր առանձնաշատուկ շուքով է նշուում Ռուսաստանում: Տօնական միջոցառումներ են նաեւ Հայաստանում:

Ինքնիշխան Հայաստանը, ազատագրուած Լեռնային Ղարաբաղը մեր ձեռքբերումներն են, Հայաստանի եւ ԼՂՀ քաղաքացիների համար մեծ պարգեւ, որ ձեռքբերեցինք նորանկախ Հայաստանի համար ամենածանր պայմաններում:

Փառք ու պատիւ ռազմի դաշտում, թշնամու հետ անհաւասար ուժերով հակառակորդին խաղաղութիւն պարտադրողներին:

Յարաբերական անդորրը շփման գծում՝ վերջնական խաղաղութիւն չէ: Վերջին մէկ տարում սրանում համոզուեցինք առաւել քան երբեք: Հայաստանն ու ԼՂ-ն ունեն անկանխատեսելի հակառակորդ, որի հետ ոչ խաղաղ բանակցութիւններն են ստիպում գիտակցել խաղաղութեան արժէքը, ոչ էլ միջազգային հանրութեան կոշտ քննադատութիւնը:

Հայրենական մեծ պատերազմում տարած յաղթանակի 70-րդ տարեդարձը եւ Խորհրդային Հայաստանի իր մասնակցութիւնն է ունեցել այս յաղթանակում՝ տալով արժանի հերոսներ: Դա նաեւ հայերի յաղթանակն է: Ռուսաստանի հետ Հայաստանի յարաբերութիւնները պէտք է լինեն ռազմավարական, սակայն այսօր, առաւել քան երբեք, այդ յարաբերութիւնների հաւասարը հաւասարի յարաբերութիւններ չեն, եւ մեզ՝ հայերիս յաճախ ռուսատրպէյճանական եւ ռուս-թուրքական ջերմ յարաբերութիւնները կաս-

Ազահ եւ անամօթ

ԱՐՄԻՆԷ ՕՀԱՆԵԱՆ

Ընդդիմութեան թուլացումն ու հասարակութեան անտարբերութիւնն ուղղակիօրէն ազդում են իշխանութեան որակի ու պահպանմանը: Իշխանութեան թուլացումն է ամենուրեք: Իշխանաւորների ինքնավստահութիւնն ու ցինիզմն օրէցօր աճում են, նրանք աւելի ու աւելի անամօթ, իրենց գործողութիւններում աւելի համարձակ են դառնում: Թուում է՝ ուրիշ ի՞նչ պէտք է անեն յայտնի մարզպետն ու իր կրիմիալ որդին, որ զրկուեն իշխանական կերակրատաշտից, յայտնուեն ճաղերի ետեւում, պատասխան տան իրենց յանցագործութիւնների համար: Բայց՝ ոչ, նրանց «յաղթարշաւը» շարունակուում է, հերթական գոհերն էլ հիւանդանոցում են:

Թուում է՝ ինչքան պէտք է անամօթ լինի իշխանութիւնը, որ իւրաքանչիւր ազատուող աթոռին փորձի նստեցնել սեփական գաւակներին կամ իր հետ արիւնակցական եւ այլ սերտ կապեր ունեցող անձանց: Օրէնքը, անշուշտ, չի

կածներ են հարցում:

Հայաստանի եւ Ռուսաստանի իշխանութիւնները պէտք է անկեղծ լինեն միմեանց հետ: Դա է պահանջում երկու ժողովուրդների՝ բազմամեայ բարեկամութիւնը, եւ եթէ կան կնճռոտ հարցեր, դրանք անկեղծօրէն պէտք է լուծել եւ առաջ անցնել: Վստահութիւնն ամենակարեւորն է:

Բոլոր յաղթանակներից կարեւորը՝ մեր պետականութիւնն է, մեր անկախ Հայաստանն ու ազատագրուած Արցախն է: Սա, իսկապէս, մեծ ձեռքբերում է, որի իմաստն ու նշանակութիւնը, մենք, երբեմն դժգոհ լինել մեր երկրում այս կամ այն խնդրից, մոռացութեան ենք տալիս:

Հայրենիքից խոռովել չի կարելի, հայրենիքից հեռանալը՝ լուծում չէ:

Այսօր՝ Շուշիի ազատագրման, Լեռնային Ղարաբաղի պաշտպանութեան բանակի օրը ու Հայրենական մեծ պատերազմում տարած յաղթանակի 70-րդ տարեդարձին պէտք է աւելի խորը մտորենք մեր պետականութեան պահպանման մասին: Դրան ծանր գնով ենք հասել, հետեւաբար պահպանենք յաղթանակները՝ մեր երկիրն ամրացնելով: Ապացուցենք, որ մենք տարբերում ենք մեր հակառակորդից եւ Հայաստանի դրական միջազգային վարկը ամէն գնով պահպանենք: Այդպէս կամրացնենք Հայաստանի պետականութիւնն ու կարժեւորենք Արցախի միջազգային ճանաչման գործընթացը:

Բոլոր յաղթանակներից կարեւորը՝ Հայաստանի պետականութիւնն ու ազատագրուած Արցախն է:

«ՀԱՅԵԼԻ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՄՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆԶԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ
SOPH. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆԵԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

Յրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնէր հոն արտայայտուող բոլոր միտքերը

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հայաստանի Ընդդիմութիւնը Չի Մասնակցի ՏԻՄ Ընտրութիւններին

Ընդդիմութիւնը չի մասնակցի Յունիսի 7-ին Հանրապետութեան 20 քաղաքներում ու գիւղերում կայանալիք համայնքապետի ընտրութիւններին եւ չի աջակցի որեւէ թեկնածուի, մինչդեռ իշխող Հանրապետականը թեկնածու ունի գրեթէ բոլոր համայնքներում:

«Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան նախագահ Նաիրա Զոհրապեանն «Ազատութեան»-ն սասց, որ չի սատարի անգամ Արտաշատում քաղաքապետի թեկնածու առաջադրուած Արգամ Աբրահամեանին, ով վարչապետի որդին է, միաժամանակ՝ ԲՀԿ նախկին ղեկավար Գագիկ Ծառուկեանի փեսան:

Հայ Ազգային Գոնկրէսի խորհրդարանական խմբակցութեան ղեկավար Լեւոն Զուրաբեանն անիմաստ է համարում ռեսուրս ծախսել տեղական ընտրութիւնների վրայ: Վերջին անգամ ՀԱԿ-ը մասնակցել է տեղական ընտրութիւններին ԲՀԿ-ի հետ համագործակցութեան ժամանակ, երբ իշխանափոխութեան յոյս կար, ասում է Զուրաբեանը:

«Յաղթե՛լ, մոռացէ՛ք, դա անհար է: Այսօր Հայաստանում տեղական ընտրութիւնները երբեք որեւէ ընդդիմութիւն չի կարող յաղթել», - սասց Զուրաբեանը:

ՀԱԿ խմբակցութեան ղեկավարն ասում է, որ տեղական ընտ-

րութիւններով ոչ թէ քաղաքական կամ պետական, այլ միայն անձնական հարցեր են լուծուում:

Սոցիալ-տնտեսական իրավիճակի վատթարացմանը զուգահեռ գործող իշխանութիւնների օգտին ձայներն աւելանում են: Լեւոն Զուրաբեանը սա անտրամաբանական է համարում. - «2007 թուին հանրապետականները հազիւ կարողանում էին 33 տոկոս ստանալ, դրանից յետոյ՝ 40, ես կեղծուած տոկոսի մասին եմ խօսում: Յետոյ՝ 52, վերջին տոկոսներին արդէն նրանք 60-65 ցուցանիշին են հասել: Միակ բացատրութիւնն այն է, որ ընտրական մեխանիզմները գնալով ոչնչացւում են եւ իսկապէս Սերժ Սարգսեանը կարող է խփել ցանկացած տոկոս»:

«Ժառանգութիւն»-ը եւս պնդում է՝ տեղական ինքնակառավարման համակարգը ոչնչացուած է, ամէն ինչ գտնուում է մարզպետների ձեռքում, եւ անգամ համայնքապետերուն անկուսակցական թեկնածուներն ընտրուելուց յետոյ ստիպուած են լինում Հանրապետական կուսակցութեան անդամ դառնալ:

«Ժառանգութեան» փոխնախագահ Արմեն Մարտիրոսեանը նշում է, որ ընտրութիւններում իշխանական ռեսուրսները օգտագործման ու կեղծարարութեան պայմաններում ընդդիմութիւնն ի վիճակի չէ պայքարի մէջ մտնել:

Հիմնադիր խորհրդարանի Ռազմավարութիւնը Նոյնն է, Վերանայում են Մարտավարութիւնը

«Հիմնադիր խորհրդարանը» քննարկում է մարտավարութեան փոփոխութեան հարցը, որոշումը գրեթէ կայացուած է, կարծում են՝ այս փուլում ճիշդ է համագործակցել այն ուժերի հետ, որոնց օրակարգում է «ռեժիմից ձերբազատումը», «Ազատութեանը» փոխանցեց Հիմնադիր խորհրդարանի քարտուղարութեան համակարգող, Շուշիի առանձնակի գումարտակի հրամանատար Ժիրայր Սեֆիրեանը:

«Շատ ուժեր չկան դժբախտաբար, թէ բարեբախտաբար: Անուններ չփորձեմ թուարկել, սակայն մատնացոյց կ'անեմ հետեւեալը՝ եւ «խորհրդարանում առկայ ընդդիմադիր ուժեր, ինչու չէ՛ նաեւ համակարգից դուրս քաղաքացիական խմբեր, կազմակերպութիւններ, խմբաւորումներ, ուժեր, որոնք մերժում են այս համակարգը, ռեժիմը: Ուժեր՝ որոնք զիտակցում են, որ օր առաջ պէտք է ձերբազատուել այս իշխանութիւններից», - մանրամասնեց Սեֆիրեանը:

«Հիմնադիր խորհրդարանի» նախաձեռնած «100-ամեակն առանց ռեժիմի» շարժման առաջնորդի պատկերացմամբ, այդօրինակ համագործակցութեան կայացման պարագայում թեւադրողներ չեն լինելու:

«Անպայման չէ, որ որեւէ ուժ կարողանայ իր ծրագիրը փորձել առաջարկել բոլորին՝ սակայն,



Հիմնադիր խորհրդարանի համակարգող Ժիրայր Սեֆիրեան

որ այս է եւ վերջ: Այսօր հարկաւոր է կարեւորագոյն հարցերի շուրջ միաւորուել, քայլեր կատարել, իսկ ռեժիմի ձերբազատումից յետոյ՝ անցումային ժամանակաշրջանում, նորից իրարից հեռանալ եւ ամէն մէկը քաղաքական իր ուղին շարունակել», - մանրամասնեց նա:

Առաջին քայլը «Հիմնադիր խորհրդարանը» կը կատարի առաջիկայ օրերին քննարկում կը նախաձեռնեն՝ Սեֆիրեանի ձեռակերպմամբ՝ քաղաքապետներին ազատ արձակելու հարցով, կ'առաջարկեն գործողութիւնների պլան մշակել:

«Ես համոզուած եմ, որ մեր ազատ արձակմամբ կծիրը քանդուել է, մենք պէտք է հետամուտ լինենք», - սասց Սեֆիրեանը:

Վարչապետի Միլիոնատեր Որդին Հաւակնում է Արտաշատի Քաղաքապետի Պաշտօնին

17 տարուայ ընդմիջումից յետոյ Արտաշատի քաղաքապետի պաշտօնին կրկին հաւակնում է Աբրահամեանների ընտանիքը:

Այս անգամ Արտաշատում ընտրապայքարի է դուրս եկել 29-ը դեռ չբոլորած Արգամ Աբրահամեանը՝ վարչապետի որդին: Քաղաքի 14 տարուայ քաղաքապետ, տեղում Հանրապետական կուսակցութեան կառուցի ղեկավար Գագիկ Մուրադեանն այս անգամ չի առաջադրուել, ասում է՝ այլ աշխատանքի է անցնելու, որպէս Արտաշատում Հանրապետականի պատասխանատու՝ կը սատարի կուսակցութեան թեկնածուին:

Քաղաքապետի թեկնածու Արգամ Աբրահամեանը ընտրական յանձնաժողով ներկայացրած փաստաթղթերում գրանցուած է որպէս «Իմպերիում Գրուպ» ընկերութեան տնօրէն: Թեկնածուն իր ու-

նեցուածքը կը յայտարարարի առաջիկայ օրերին, մինչ այդ՝ Աժ նախագահ Գալուստ Սահակեանը լրագրողների հետ զրոյցում ասել էր, թէ Արգամ Աբրահամեանը «բաւականին լուրջ կարողութիւններ ունի»: Սահակեանը չի մանրամասնել, թէ յատկապէս ինչ «կարողութիւնների» մասին է խօսքը, բայց «Հետքի» հարցումներին ի պատասխան՝ Պետոեգիտութից յայտնել են, որ վարչապետի 29-ամեայ որդին «Սթրատեջիկ Փրոֆըրթի Մենեջմենթ» ընկերութեան 100 տոկոս բաժնետէրն է, եւ որ ընկերութեան կապիտալը կազմում է մօտ 700 հազար դոլար:

Արտաշատցիները միլիոնների մասին չէին լսել, բայց շատերն էին ցոյց տալիս քաղաքապետարանի դիմաց գործող «Արտաշատ» սուկուրի կենտրոնը, որ բոլորին յայտնի է որպէս Արգամ Աբրահամեանի սեփականութիւն:

«Ժամանակ» Ծառուկեանը վերադառնում է, Չի Բացառում, Որ Նա Նորից Դառնայ ԲՀԿ

«Ժամանակ» թերթը գրում է. «ԲՀԿ նախկին նախագահ, «Մուլտի Գրուպ» կոնցեռնի նախագահ Գագիկ Ծառուկեանը հանդիպել է Արմաւիրի եւ Արարատի մարզի խաղողագործների հետ, այդ հանդիպումները տեսագրուել են եւ ցուցադրուել «Կենտրոն» հեռուստաընկերութեամբ:

Ծառուկեանի այս վերադարձը եւ յայտնութիւնը ժողովրդի առաջ կարող է միայն մէկ բացատրութիւն ունենալ. Ծառուկեանը նոր քաղաքական դերակատարում է ստանձնում:

Հարցն այն է՝ արդեօք Ծառուկեանի վերադարձը հանրային կեանք ինքնուրուէն ընդունուած որոշման արդիւնք է, թէ՞ այն

համաձայնեցուել է Սերժ Սարգսեանի հետ: Սարգսեանը կարող է դէմ չլինել Ծառուկեանի ռեաբիլիտացիային՝ նկատի ունենալով, որ հիմա այդ ռեաբիլիտացիան կարող է տեղի ունենալ իր վերահսկողութեան տակ եւ այն չափով, որ քան որ իր համար ցանկալի է: Ծառուկեանը կը խաղայ Սարգսեանի գրած սցենարով, եւ չի բացառում, որ նոյնիսկ վերադառնալ ԲՀԿ ղեկավարի պաշտօնին: Սարգսեանը մշտապէս ցանկացել է ունենալ երկկուսակցական քաղաքական համակարգ, բայց պայմանով, որ երկրորդ կուսակցութեան ղեկավարը չլու-հնազանդ պէտք է կատարի իր հրահանգները:

Մասնագիտական Յանձնաժողովը Վերջնական Եզրայանգում է Կատարել Յօգուտ Խորհրդարանական Համակարգի

Ինչպէս «Ազատութեանը» փոխանցեց Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական յանձնաժողովի անդամ Վարդան Պօղոսեանը, յանձնաժողովն աշխատում է մէկ կառավարման խորհրդարանական համակարգի անցման նախագծի վրայ:

Իշխող Հանրապետականը, չի շեցնենք, չէր բացառել, որ Ազգային ժողովի քննարկմանը կարող է ներկայացուել սահմանադրական փոփոխութիւնների երկու փաթեթ՝ նաեւ կառավարման գործող կիսանախագահական համակարգը կատարելագործող:

«Մենք աշխատում ենք մէկ նախագծի վրայ, եւ, կախուած քաղաքական կոնսուլտացիաների բնոյթից, քաղաքական ուժերի առաջարկութիւններից, հնարաւոր են նաեւ որոշակի մոդիֆիկացիաներ նախագծում: Չեմ բացառում, որ մէկ նախագծի մէջ լինեն նաեւ տարբեր այլընտրանքներ: Չնայած դրա հաւանականութիւնը շատ քիչ էմ համարում, որովհետեւ մասնագիտական առումով Սահմանադրական յանձնաժողովը, կարծում եմ, վերջնական մասնագիտական եզրայանգում է կատարել յօգուտ խորհրդարանական համակարգի», - փոխանցեց Պօղոսեանը:

Նրա խօսքով՝ ձեւակերպուած են սահմանադրական կարգի հիմունքներին, մարդու հիմնական իրաւունքներին եւ ազատութիւններին վերաբերող սահմանադրական փոփոխութիւնների նախագծի առաջին երեք գլուխները: Կառավարութեանը, Ազգային ժողովին, Հանրապետութեան նախագահին վերաբերող գլուխների վրայ աշխատանքը շարունակուած է:

Յանձնաժողովն առաջարկութիւններ է ստացել 14 կուսակցութիւններից: Պօղոսեանի փոխանցմամբ՝ նախագիծն այժմ մշակում են իրենց պատկերացումներով, հաստատուած հայեցակարգի հիման վրայ: Երբ նախագիծն ամբողջանայ, կը սահմանուի քաղաքական ուժերի հետ հանդիպումների ժամանակացոյց, կը քննարկեն նաեւ նրանցից ստացած առաջարկները:

Նախագահի հետ հանդիպած ուժերի մեծամասնութիւնը՝ «Ժառանգութիւն»-ը, «Բարգաւաճ Հայաստան»-ը, «Ազատ դեմոկրատներն» ու ՀՀՇ-ն ը Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական յանձնաժողովին սահմանուած ժամկէտում գրաւոր առաջարկներ չեն փոխանցել:

Քաղաքական հաւանութիւն տալով սահմանադրական բարեփոխումների հայեցակարգին՝ նախագահ Սարգսեանը կառավարման խորհրդարանական համակարգին անցնելու հարցում մտավախութիւններ ունէր. լաւ չէր պատկերացնում, թէ առաջարկուող մոդելն ինչպէս է երաշխաւորելու երկրի արտաքին ու ներքին անվտանգութիւնը:

Ըստ վարդան Պօղոսեանի, այս պահին էլ վերջնական լուծում չկայ, թէ ով է լինելու անվտանգութեան երաշխաւորը, բայց նախական մօտեցմամբ երկրի նախագահը պէտք է հեռու մնայ այդ հարցերից. - «Մեզ համար ակնյայտ է, որ այդ բոլոր հարցերի համար վերջնական պատասխանատուն գործադիր իշխանութեան բարձրագոյն մարմինն է՝ կառավարութիւնը»:

# ԼՈՒՐԵՐ

## Ատրպեյճանի ՊՆ-ն Շքերթի Լուսանկարից Զանել Է Զայկական Դրօշը



Ատրպեյճանի կողմէ կեդոնաձև նկարը

Բրիտանական BBC-ն անդրադարձել է Ատրպեյճանի Պաշտպանության նախարարության կայքում տեղադրված լուսանկարից հայկական դրօշի անհետանալու միջադեպին:

Հայկական դրօշը մաքրել էին Մայիսի 9-ին Մոսկուայում կայացած շքերթի լուսանկարից: Դրօշը բացակայում է լուսանկարից, որտեղ երևում են ատրպեյճանցի զինուորականներն ու նրանց հետևից եկող հայ զինծառայողները: «Սակայն հեռարձակուող միջոցառման ժամանակ երևում էր, թէ ինչպես են զինուորները քայլում իրար հետևից՝ ձեռքներին բռնած իրենց դրօշները», - ասում է յօդուածում:

Ընդ որում, BBC-ն մէջբերում է ատրպեյճանցի ռազմական փորձարկումից հետո:

Իսկական նկարը՝ Հայկական դրօշով

ձագճտ Ուզէիր Ջաֆարովի խօսքը: Փորձագճտ կասկած չունի, որ խօսքը ֆոտոմոնտաժի մասին է: «Ըստ ՊՆ աղբիւրների՝ իրենք էլ չէին սպասում, որ հայ եւ ատրպեյճանցի զինծառայողները քայլերի դուրս կը գան մէկը միւսի հետևից: Փորձերի ժամանակ նրանք հրապարակի տարբեր մասերում էին քայլում», - յայտարարել է Ջաֆարովը:

Ատրպեյճանի ՊՆ-ն հրաժարուել է մեկնաբանություններից:

Նշենք, որ կարմիր հրապարակում օտարերկրեայ ռազմական հաշուարկների հերթականութիւնը որոշուել է ռուսական այբբենական կարգով: Հայ զինծառայողները ատրպեյճանցիների հետ են մասնակցում քայլերի արդէն 3-րդ անգամ:

## Սեյրան Օհանեան. «Մենք Տեղեկութիւններ Ունենք Պարուի Գնած Ձեւերի Մասին»

Լայնածաւալ աշխատանք է ընթանում սահմանում իրավիճակը բարելաւելու, պաշտպանական կառուցները տեխնիկական միջոցներով համալրելու ուղղութեամբ: Այդ մասին ասել է Հայաստանի պաշտպանութեան նախարար Սեյրան Օհանեանը Մայիսի 12-ին կայացած մամուլի ասուլիսում: Ասուլիսը կայացել է Ատրպեյճանի հետ սահմանի հիւսիս-արեւելեան ուղղութեամբ առաջնագծում:

Նախարարի խօսքով, փորձարկումներ են նոր զինատեսակներ: Նախարարը նշել է, որ տեղանքի տարբերութեան եւ դիրքերի հեռավորութեան պատճառով հնարաւոր չէ ամենուր նոյնանման սխեմաներ դնել: Միաժամանակ, նա նշել է, թէ դիտարկման համակարգը գտնուում է բաւական բարձր մակարդակի վրայ: Ստորաբաժանումները գիշերային դիտման եւ ջերմադիտման սարքեր ունեն:

Խօսելով Ատրպեյճանի կողմից սպառնալուծութիւնների մրցակցութիւն մասին՝ նախարարը նկատել է, թէ հայկական կողմը ուշադիր հետեւում է իրավիճակին: ՁՈՒ-ն համալրում է հայրենական եւ օտարերկրեայ արտադրութեան զինատեսակներով, հեռահար եւ ճշգրիտ գէնքերով, կապի միջոցներով, ԱԹՄ-ներով: Բարելաւուել է ռազմարդիւնաբերական համալիրը, ստեղծուել են համատեղ ձեռնարկութիւններ:

«Մենք տեղեկութիւններ ու-



Հայաստանի պաշտպանութեան նախարար Սեյրան Օհանեան

նենք Պաքուի գնած սպառնալուծութեան մասին: Ի պատասխան, շնորհիւ նոր սպառնալուծութեան, բարձր բարոյական ոգու եւ անձնական պատրաստութեան մենք պահում ենք հաւասարակշռութիւնը: Ձինուած ուժերը պատուով են կատարում իրենց առջեւ դրուած խնդիրները», - ընդգծել է նախարարը՝ յաւելելով, թէ իր ղեկավարած գերատեսչութիւնը առկայ խնդիրները չի կոծկում, բայց ձգտում է դրանք լուծմանը:

Օհանեանը խօսել է նաեւ Ատրպեյճանին ռուսական գէնքի վաճառքի մասին, ասել, թէ Ռուսաստանը, գէնք վաճառելով, պահպանում է վերահսկողութիւնը իրավիճակի վրայ, իսկ այդ ոլորտում Հայաստանի եւ Ռուսաստանի յարաբերութիւնները գտնուում են աւելի բարձր մակարդակում:

## Ոստիկանական Բռնութիւն Նախագահականի Մօտ՝ Զինծառայողների Մայրերի Նկատմամբ

Բանակում խաղաղ պայմաններում զոհուած զինուորների ծնողները պատմում են, որ Մայիս 13-ին եւս նախագահի նստավայրի մօտ ոստիկանների դիմադրութեան են հանդիպել: Զոհուած զինծառայողների ծնողները Բաղրամեան 26 էին եկել դեռ 7 ամիս առաջ՝ նախագահ Սերժ Սարգսեանին գրած դիմումի մասին տեղեկութիւն ստանալու, մինչդեռ ոստիկաններն իրենց բռնի ուժով մի մայրից միւսն են տարել:

«Պատճառն այն է, որ ամիսներ առաջ նրանք նման արարքի համար ընդամենը կարգապահական սոցիի ենթարկուեցին», - ասում է ծնողներից Նանա Մուրադեանը:

«Կանգնեցինք ըստեղ, ու ոստիկանները մեզ տեսան, վազելով գալիս են, էն ոնց որ յանցագործների հետեւից են վազում: Վազելով եկան՝ բա գնացէք տեղից էն կողմ, մի կ'անգնէք, գնացէք էն դիմացի մայրը կանգնէք, ասեցինք չենք գնալու, մենք հանգիստ կանգնում ենք, ի՞նչ ենք անում, հանգիստ կանգնած ենք, թողէք մեզ, չկանգնէք: Հեռախօսով չգիտեմ ում հետ ինչ խօսաց, եկան ու՝ քաշէք, տարէք, սկսեցին մեզ քաշ տալ», - պատմեց նա:

Քաշըռուկից յետոյ զոհուած զինծառայողների ծնողները շտապել են ոստիկանութեան կենտրոնի բաժին յանցագործութեան մասին հաղորդում տալու: Մայրերից Իրինա Ղազարեանը նշում է, որ իրենց այստեղ մի քանի ժամ պահել են եւ յետոյ միայն դատաբժշկական փորձաքննութիւն անցնելու ուղեգիր տուել: Ծնողները նշում են, որ չեն



Ոստիկանները բռնի ուժով կը հեռացնեն գոհուած զինուորի մայրը

հաւատում այն վարկածին, թէ իրենց տղաներն ինքնասպան են եղել, եւ պայքարում են, որպէսզի քրէական գործերը նորից քննուեն, մեղաւորները՝ պատժուեն: Նրանք նշում են, որ իրենց սեփական հետաքննութիւնն են անցկացրել եւ գիտեն, թէ ովքեր են մեղաւոր, սակայն իրենց ոչ ոք չի ուզում լսել:

«Դատախազութիւնը խաբում ա, նախարարութիւնը խաբում ա, քննչականը խաբում ա, բոլորը խաբում են: Մենք ո՛ւմ դիմենք, մէկն ա մնում: Բաղրամեան 26, ընդդէմ էլ գնում ենք, ոստիկանները ծեծում են, ջարդում են, ընենց են սեղմում, ցաւից ուշքդ գնում ա», - նշեց Ղազարեանը:

Զոհուած զինուորների ծնողները որոշել են ամէն Չորեքշաբթի հաւաքուել նախագահի նստավայրի մօտ մինչեւ երկրի ղեկավարն ընդունի իրենց:

## Թուրքերը Կատաղել Են Պուտինի «Ոչ»-ից

Անկարայի եւ Մոսկուայի յարաբերութիւնները սառեցման պատճառը ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի ապրիլ քսանչորսեան այցն էր Երեւան: Այս մասին գրում է սերբական «Telegraf» պարբերականը «Թուրքերը կատաղել են. Պուտինն ասաց ոչ» յօդուածում: Դրանում մասնաւորապէս ասում է. «Թուրքական հոսքի» յետաձգման պատճառը, ըստ փորձագէտների, Անկարայի եւ Մոսկուայի յարաբերութիւնների սառեցումն է Երեւանում ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի ունեցած ելուցից յետոյ, որտեղ նա դատապարտեց Թուրքական բանակի կողմից իրականացուած Հայոց ցեղասպանութիւնը:

Այս մասին յայտարարութիւնը

յատկապէս անսպասելի էր, քանի որ «Գազպրոմի» եւ Թուրքական «Botas»-ի յայտարարութիւնները լաւատեսական բնույթի էին: Որոշ աղբիւրներ յայտնում էին, որ բանակցութիւնները մօտ են աւարտին, եւ Թուրքական կողմը պատրաստուած էր ռուսական գազի գեղչ ստանալ: Սակայն 1.5 ամիս տեւած բանակցութիւններից յետոյ կողմերը չկարողացան որոշել, թէ ինչպէս պէտք է կիրառուի գեղչի բանաձեւը:

Թէ երբ կողմերը համաձայնութեան կը գան, ոչ ոք չի կարող կանխագուշակել: Դա տեղի կ'ունենայ, երբ Թուրքիայի հետ յարաբերութիւնները կարգաւորուեն, ինչը երկու կողմերի համար էլ շահաւէտ է»:

## Կնեսետի նախագահ. «Պէտք է Վերանայել Ցեղասպանութեան Զարցով Իսրայէլի Դիրքորոշումը»

Իսրայէլի խորհրդարանի նախագահ Եուլի էդելշտեյնը կոչ է արել վերանայել Իսրայէլի դիրքորոշումը Հայոց ցեղասպանութեան հարցում՝ սպանութիւններ «մարդկութեան վրայ բարոյական բիծ» անուանելով: Կնեսետում ելուցի ընթացքում էդելշտեյնը յայտարարել է, թէ պատմութիւնը չի կարող փոփոխուել: «Աղէտն այլեւս չի կարող թաքցուել դիւանագիտութեան ետեւում», յայտարարել է նա:

Եուլի էդելշտեյնը Իսրայէլի դիրքորոշումը «չափազանց անվճռական եւ չափազանց գուսպ» է անուանել, հաղորդում է «The Jerusalem Post»-ը:

«Գաղտնիք չէ, որ Իսրայէլը ոչ միանշանակ դիրքորոշում ունի Ցեղասպանութեան հարցում: Հրեայ լի-



Իսրայէլի խորհրդարանի նախագահ Եուլի էդելշտեյն

նելով՝ մենք չենք կարող լուել: Մենք չենք կարող փակել մեր աչքերը կամ նուազեցնել հայերի ողբերգութեան աստիճանը», - ասել է նա:

# Ամերիկայի Փոխ-Նախագահը Ներկայ Եղավ Ուաշինգթոնի Մեջ 100-Ամեակի Արարողութեան

Շարունակուած էջ 1-էն

տարբեր նահանգներու 80 կազմակերպութիւններ ներկայացնող հայ պատուիրակներու հետ նախագահի նստավայրի գլխաւոր սրահին մէջ: Սոյն հանդիպման ներկայ էին նաեւ Հայաստանի արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալպատեան, սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեան, Ուաշինկթընի մօտ Հայաստանի լիազօր դեսպան եւ նախկին վարչապետ Տիգրան Սարգիս-

թեան զարգացման գծով: Ներկայիս 400-է աւելի ամերիկեան դրամագլուխով հաստատութիւններ կը գործեն մեր երկրին մէջ: Քիչ առաջ մենք ստորագրեցինք ԱՄՆի եւ Հայաստանի միջեւ ներդրումային համաձայնագիր մը, որ փոխ գործակցութեան նոր հորիզոններ կը բանայ Հայաստանի տնտեսութեան զարգացման գծով»:

Նախագահը որոշ լուսաբանութիւններ տուաւ նաեւ Եւրասիական տնտեսական համագործակ-



Նախագահ Սերժ Սարգսիսեանի հանդիպումը Ամերիկայի պատուիրակներու հետ

եան եւ Նալբերի Պետրոսեան:

Դեսպան Տիգրան Սարգսիսեանի բարի գալուստի խօսքէն նետք էլլոթ ունեցաւ նախագահ Սերժ Սարգսիսեան: Ան իր ուրախութիւնը յայտնեց ստեղծուած ջերմ մթնոլորտի մէջ հաճոյքն ունենալու եւ հանդիպելու հայ համայնքի ներկայացուցիչներուն հետ: «Դուք ձեր աշխատասիրութեամբ ու տաղանդով ձեր անկեղծ ներդրումը կը դնէք բազմազանութիւն ունեցող այս երկրին մէջ»: Ապա նախագահը անդրադարձաւ հայոց ցեղասպանութեան 100րդ տարելիցի համահայկական եւ միահամուռ ջանքերով եղած յատկանշական միջոցառումներուն: Այս բոլորի կիզակէտը հանդիսացաւ Ծիծեռնակաբերդի բարձրունքին վրայ Ապրիլի 24-ին 65 երկիրներու ներկայացուցիչներով նշուած Մեծ Եղեռնի 100րդ տարելիցը, ուր միջազգային ընտանիքը իր զօրակցութիւնը յայտնեց պահանջատէր հայ ժողովուրդին:

Սերժ Սարգսիսեան բացառիկ գնահատականով անդրադարձաւ Հռոմի Սրբազան քահանայապետի պատրաստութեան և պատգամին, որով 1 միլիոն կաթողիկոսներու անունով, կը դատապարտէր ցեղասպանութիւնը եւ կը զօրակցէր համայն հայութեան: Ապա նախագահը յայտարարեց. «Մենք շարունակելու ենք մեր աշխատանքը ցեղասպանութեան միջազգային ճանաչման եւ դատապարտման ուղղութեամբ»:

Խօսելով Արցախի մասին նախագահ Սարգսիսեան ընդգծեց. «Ղարաբաղի հիմնահարցը կը մնայ մեր գլխաւոր հարցը: Մենք համաձայն ենք Մինսքի համաձայնագրերու բանաձեւումներուն»:

«Մեր յաջորդ հարցն է՝ Հայաստանի տնտեսութեան վերակազմումը: Արդէն որոշ յաջողութիւններ արձանագրած ենք տնտեսու-

ցութեան մասին որով կը խրախուսէ մեր ներդրումները այդ երկիրներուն հետ:

Սարդարապատի պատմական ճակատամարտի մասին խօսելէ ետք Սերժ Սարգսիսեան ըսաւ. «Հայոց իսախնդրութեան Ապրիլի իր» միշտ յաջորդում է Մայիսեան յաղթանակը: Փառք անոնց որոնք իրենց մնայուն ներդրումը կը բերեն Հայաստանի պետականութեան հզօրացման»:

Այնուհետեւ տեղի ունեցաւ հարց-պատասխանի պահը, որուն ընթացքին ներկայացուցեցան Հայաստանն ու հայութիւնը յուզող այլազան հարցեր եւ հաստատումներ ու տրուեցան համապատասխան լուսաբանութիւններ:

Մայիսի 7-ին Հնչակեան պատուիրակութիւնը տեսակցութիւն մը ունեցաւ սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեանի հետ: Նոյն օրը երեկոցեան Ուաշինկթընի մայր տաճարին մէջ ներկայ գտնուեցաւ միջ-յարանուանական ոգեկոչման արարողութեան, որուն ներկայ էին նաեւ ԱՄՆ-ի փոխ նախագահ Ճօ Պայտոն, ՄԱԿ-ի մօտ Ամերիկայի դեսպան Սէմէնթա Փաուլըզ, եւ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսիսեան: Այստեղ ելոյթներ ունեցան Ամենայն Հայոց եւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսներ Գարեգին Բ. եւ Արամ Ա.:

Մայիսի 8-ին Հնչակեան պատուիրակութիւնն այցելեց Մարիօթ հիւրանոցին մէջ Հայոց Յեղասպանութեան հարիւր ամեակին նուիրուած ցուցահանդէսին ու հրէական ողջակիզումի (հոլոքոսթ) թանգարանը:

Նոյն օրը տեղի ունեցաւ համերգ Հայաստանի սիմֆոնիկ նուագախումբի կատարմամբ:

Մայիս 9-ին տեղի ունեցաւ հայկական հանդիսաւոր պատարագ



Միջ-յարանուանական ոգեկոչման արարողութեան ելոյթ կուրնեայ Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ.



Այցելութիւն հրեական ողջակիզումի (հոլոքոսթ) թանգարան

Ուաշինկթընի Մայր տաճարին մէջ: Իսկ երեկոցեան ճաշկերոյթի պատիւ ամերիկեան այն բարեսիրական ընկերութիւններուն, որոնք

մարդասիրական օժանդակութիւններ կատարած են տասնեակ հազարաւոր հայ որբերու եւ տեղահանուած զաղթականներուն:



**ԳՈՒՄԱԼԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ  
ՄԵՄԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԾՈՒՄԻԲԻ  
ԳԱՄԱՌՕՍԱԿԱՆ ԵՐԵՂՈՆ**

Կիրակի, Մայիս 17, 2015ին երեկոցեան ժամը 6:30ին  
Պոլսահայ Միութեան Մրտին մէջ



Հայազգի նեսագօտող Միաբ Քելչեանի նպասակը  
Եւ ջանքերը կը միտին մոռոյած եւ քաղուած պատմական իրականութիւնը դժգոյ լոյս աշխարհ բերել, լատենագրական արդիական միջոցներով (multimedia), որ աւելի հասանելի է նոր սերունդին: Լաւն այն բոլոր խնայելու ու մարդասէր օտարականներուն բարեգործութիւնները Հայ ժողովուրդին հասնելու «Near East Relief»-էն օրինակ, եղած են Ռուպալէ, Գիլիմիսէ, Ճափոսէ, բարեգործներ որոնք նիւրական եւ մարդասիրական մեծ օգնութիւններ ուղարկած են Հայ ժողովրդի խելակեղուն: Հայ որբերը պահուել, արի կանոնաց գոյատեւելու եւ պահպանելու իրենց գոյութիւնը, հոգեւոր եւ մտաւոր դաստիարակութիւն ապով, նոյնիսկ արհեստներ սորոջնելով անոնց: Այսինքն՝ մոռոյած էջերը միջոցը հասնել եւ որպէս երախտագիտութիւն՝ Եոլեթի, Գեթանայի, Ամերիկայի, Անգլիոյ, Հարաւային Թորեալի եւ այլ երկիրներու բազմաթիւներուն:

Տեղեկութեան համար նետաձայնել Տրք. Յովհաննէս Գուլակ Աւետիքեանին (818) 800-1976 (cell)

Մուտքը ազատ  
Հասցէ՝ 19726 Sherman Way, Winnetka, CA 91306

Հիւրասիրութիւն  
19726 Sherman Way, Winnetka, CA 91306



**AN IMPRESSIVE LECTURE NIGHT  
ORGANIZED BY OIA CULTURAL COMMITTEE  
On Sunday, May 17, 2015 at 6:30 pm  
ABOUT THE ARMENIAN ORPHANAGES**

Documentary includes a feature interview by Maurice Missak Kelechian, whose findings unveiled the secrets of an orphanage in Antoura near Beirut, Lebanon where 1,000 Armenian Genocide Orphans were being Turkified. The documentary also explores the herculean task of the American Near East Relief Foundation in saving, feeding and sheltering over 150,000 documented Armenian genocide orphans between 1919 and 1926 by setting up over 200 temporary and permanent orphanages in Historic Armenia, Turkey and throughout the Middle East. One of these orphanages was built in Gumri, the second largest city in Armenia, and housed 22,000 orphans.

OIA center 19726 Sherman Way, Winnetka, CA 91306

For more information please contact Dr. Ohannes Kulak Avedikyan at (818) 800-1976 (cell)  
Admission Free Reception

# ՊԱՅԾԱՌ Է ՕՐԸ ՇՈՒՇԻՆ (ՇՈՒՇԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ)

«Էլի գարուն կը գայ, կը բացուի վարդը»:

Եղիշէ Զաբինց

## ԱՒԵՏԻՍՈՒԱԶՄԻԿ

Ապրիլեան ոգեկոչումներու մուսյլ տպաւորութիւններէն ետք, հայկական դուրուկի սրտայոյզ թրթիռներուն ճնշիչ մթնոլորտէն յետոյ, մանիշակագոյն անմոռուկի սրտառուչ յուշարժարձումի կողքին, Շուշիի ազատագրութեան նշումը մեր մտասեւեռումը այս անգամ կ'ուղղէ մետալի միւս երեսին ուղղութեամբ:

Ապրիլ ամիսէն ետք Մայիսին բացուող օրացոյցին էջը լիովին կը յեղաշրջէ տրամադրութիւնները՝ անկումայինէն դէպի մարտական, թախտային տեղատուութենէ՝ հպարտաւիթ մակընթացութիւն, որուն փառապատիւնը ի հարկէ կը պատկանի 9 Մայիս 1992-ի ռազմական հրաշալի գործողութեան:

Մի քանի վիթխարի գրադարաններ լեցնող հատորներ ունինք մեր ողբերգութիւնները եղերբերգող: Ինչպիսի սրտածմլիկ դրուագներ ականդող բազմահազար յուշագրութիւններ եւ աշխատութիւններ կրնան գոհացնել անյազ ընթացող մը: Իսկ ինչո՞ւ մետալին միւս երեսը՝ մեր հերոսապատումներն ու սիրանքները արտայայտող կողմը մնացած է բարձրիթողի, կը մնայ անհամոզիչ երեւոյթ. մեղադրելի նաեւ:

Ահա այդ թերացումը կը ցանկար խոհեմօրէն սրբագրել հայրենի «Նորավանք» հիմնադրամը, որ 2010-2012 թուականներուն ընթերցողներու եւ պրոպոզիտներու գրասենյակին յանձնեց քառահատորեայ շարք մը գեղատիպ գիրքերու՝ հայոց ռազմարուեստին հմտութիւնները, սիրագործութիւնները, պատմակերտիչ յաղթանակներն ու մարտական խոյանքները նկարագրող: Լուսանկարներով եւ քարտէզներով ձոխացած այս մատենաներու վերջին գիրքին մէջ Շուշիի ազատագրութեան բաժինը կ'եզրակացուի այսպէս.

«Շուշիի ազատագրումը ռազմաքաղաքական եւ հոգեբանական առումով շրջադարձային նշանակութիւն ունեցաւ: Այս յաղթանակի շնորհիւ ազատագրուեց նաեւ Բերձորը, ինչը թոյլ տուեց վերականգնել ցամաքային կապը Հայաստանի Հանրապետութեան հետ եւ այդպիսով միացնել երկու հայկական պետութիւնները: Վերացուեցին նաեւ Ստեփանակերտին, Քարինտակ ու Շոշ գիւղերին ուղղուած սպառնալիքները: Շուշիի ազատագրու-

մը կարեւոր էր նաեւ ազգային-հոգեւոր առումով, քանի որ բերդաքաղաքն իր ճարտարապետութեամբ, Ղազանչեցոց եկեղեցով եւ այլ մշակութային հաստատութիւններով հայ մշակութային կեդրոններին մէկն է»:

1988-էն Լեւոնային Ղարաբաղի շուրջ ծաւալած իրադարձութիւնները եւ յատկապէս ռազմական գործողութիւնները կլանած էին հայութեան բոլոր հատուածները: Անշուշտ ճակատային գիծի վրայ կը գտնուէր արցախահայութիւնը, որ պատմութեան տուեալ պահուն համարեա՛ ստանձնած էր հայոց արժանապատուութեան դրօշակը բարձր պահելու բեռը: Ղարաբաղեան պատերազմը յետանաքարի պիտի ենթարկէր հայութեան լինելու իրաւունքը, որովհետեւ՝ յաղթանակի պարագային՝ ան միջազգային ընտանիքին մօտ պիտի արժանանար արժանապատիւ դիրքի, ժխտական արդիւնքի պարագային՝ բարոյահոգեբանական անկումը պիտի անճրկէր գինք՝ յաչս մարդկութեան եւ պատմութեան: Ուստի այլընտրանք չկար՝ բացի յաղթանակի ուղիէն:

Ղարաբաղեան պատերազմի ելքին մոգական բանալին էր Շուշին: Իր աշխարհագրական տեղանքին, պատմամշակութային կարեւորութեան եւ բարոյական նշանակութեան պատճառներով Շուշիի ազատագրումը անմիջապէս դրուեցաւ հայոց ռազմաքաղաքական ղեկավարութեան օրակարգին վրայ:

Շուշիի փայլուն յաղթանակը, առաջին հերթին կը պարտինք այն հաւատքին, որուն շուրջ համախմբուեցան քաղաքական եւ զինուորական ղեկավարութեան միջնակէ զննարկները, վաշտերու հրամանատարները, կամաւորականներն ու համեստագոյն զինուորականները: Ապա՝ Սպարապետ Վազգէն Սարգսեանի արժուաքանի ոգին աւելն ու աւել ներարկեց վրիժախանձ մարտիկներուն, որոնք հմուտ զօրավար Արքատի Տէր-Թադէոսեանի (Քօմանտոս) գլխաւորութեամբ դիպուկ գրոհներով, փայլուն մարտավարութեամբ եւ մարդու ռազմական ճշգրիտ օգտագործմամբ նուաճեցին անառիկ թուացող Շուշի բերդաքաղաքը: Զայն օղակելով, սաստիկ հարուածներով եւ նպատակայնաց գոյարարումով Շուշիի մէջ բազմած թշնամին խելակորոյս խոյս տուաւ անկէ: Այդպիսով, դարերու ընթացքին Արցախի տրո-



փող ոգին հանդիսացած հայոց ուստանը վերադարձաւ իր իսկական տիրոջ: Դաւադրութեամբ եւ ապանենդ սաղարանքներով քաղաքը գաւթած թշնամիին շղթան արեամբ փշրուեցաւ, բարոյական կորով եւ ազգային զգաստութիւն պարզեւելով ազատակարօտ արցախահայութեան:

9 Մայիս 1992-ը հայոց տարեգրութեան մէջ դարձաւ փայլուն թուական:

Ինչո՞ւ: Առաջին՝ ռազմագէտներ խոր գմայլանքով ընդգծեցին գործողութեան ոչ միայն բարոյական երեսակը, այլ՝ գիտա-ռազմական հնարամտութիւնը: Եթէ գիտենք փառաբանել հայ տաղանադաւոր գրողներ ու մշակոյթի գործիչներ, գիտնականներ ու արուեստագէտներ, ապա մեր ժողովուրդի ծոցէն կրնան ծնիլ նաեւ ռազմագիտական տաղանդներ, որոնք նոյնքան եւ աւելի արժանի են բարձր գնահատանքի: Ուսադիրներ կրող հայ զինուորականը եւս ծափահարելի խելամուտութեամբ եւ փորձառութեամբ կրնայ իր վաստակն ու հնարքը ներդնել հայրենիքի ծառայութեան վսեմ գործին: Հայ ռազմատաղանդը շատ յաճախ փայլած է օտար ափերու վրայ, ոչ հայկական զօրագունդերու մէջ, տարբեր ճակատներու խրամատներուն: Այս անգամ ան փայլուն դրսեւորուեցաւ հայրենի հողին վրայ եւ պատուով ամբողջացուց իրեն վաստակած վսեմ առաքելութիւնը:

Երկրորդ՝ բարոյական յեղաբեկում ապրեցաւ հայր: Հոգեբա-

նական այն նստուածքը կամ կարծրատիպը որ գոյացած էր իր մէջ, որ ինք միայն կը պարտուի եւ իր ճակատամարտերը կ'աւարտին կորուստներով եւ նահանջներով, ապա Շուշին եւ այնուհետեւ Ղարաբաղը փաստեցին թէ՛ հայր ունակ է նաեւ յաղթելու՝. արժանի՛ դաս տալու հակառակորդին, ջախջախիչ հակադարձով պատժել նախայարձակը: Այս կէտը խիստ նշանակալից է ներքին առումով:

Երրորդ՝ Արտաքին առումով Պաքուի վարիչները անփառունակ եւ ընդխուճապ պարտութեամբ սորվեցան, թէ կարելի չէ կապանքել տարածք մը, որ կը պատկանի ուրիշին. կարելի չէ Շուշին օգտագործել՝ ճնշելով Արցախը եւ վերջապէս արդարութիւնը վերջիվերջոյ պիտի ըլլայ յաղթական՝ թէ՛ կուզ հերոսական գոհողութեամբ եւ նահատակներու բոսոր արեամբ: Անոնք լիովին ըմբռնեցին, որ Շուշին Ատրպէյճանի կազմին մէջ լոկ անցեալին էր կամ ցնորական երազ է պարզապէս:

Այսօր պայծառ է օրը Շուշին: Տօնն է յաղթութեան եւ Արցախի բանակին: Ղարաբաղի տողանցող գումարտակներու դոփիւնները ողջ աշխարհին կը յուշեն, որ Շուշին բաբախող սիրտն է Արցախին, իսկ Արցախը կաթոգին սէրը ողջ հայութեան:

Ապրիլեան սեւաթոյր չիշատակներէն ետք՝ Մայիս 9-ին Շուշիի պայծառ այգաբացով կ'ըսենք մեծ բանաստեղծին իսկ լաւատեսութեամբ. «Էլի գարուն կը գայ, կը բացուի վարդը»...:

**Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին**

T: (626) 797-7680 F: (626) 797-6863  
Email: massis2@earthlink.net

**Bedros S. Maronian 818/500-9585**      **Siamanto B. Maronian 818/269-0909**

SERVING THE COMMUNITY SINCE 1975  
More locations and more ways to service your insurance and financial needs

6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048      805 East Broadway Glendale, CA 91205      300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101

- Life Insurance
- Health Insurance
- Group & Individual
- Long Term Care
- Disability
- Estate Planning
- Will & Living Trust
- Full Annual Review
- Mortgage Protection
- College Planning
- Workman's Compensation
- Employee Benefits
- Annuity
- IRA
- 401K & 403B

**A.B.A. INSURANCE SERVICES**

**Insurance coverage can help you financially!**  
Ապահովագրութիւնը Աճիրաժեղս է

Coverage & Protection should be on the top of your priority list.

Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits





### ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՆՈՒԻՐՈՒԿ ԶԱՅԿԱԿԱՆ ՏԱՂԱԲԱՐԸ ՎԵՆԵՏԻԿԻ ԲԻԵՆԱԼԵՈՒՄ «ՈՍԿԵ ԱՌԻԺ» Է ՍՏԱՑԵԼ



Վենետիկի 56-րդ բիենալեում, որին 53 երկիր է մասնակցում, Հայաստանի տաղաւարն արժանացել է «Ոսկէ Առիւծ» գլխաւոր մրցանակին: ՀՀ-ն ներկայացուած էր «Հայութիւն» (Armenity) խորագրով ցուցադրութեամբ, տաղաւարը տեղակայուած է Սուրբ Ղազար կղզում՝ Միլիթարեան միաբանութեան տարածքում: Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած հայկական տաղաւարի ցուցադրութեանը մասնակցում է պիւբլիքասայ 18 արուեստագէտ: Եւրոպայի, Ասիայի, Ամերիկայի տարբեր քաղաքներում ստեղծագործող արուեստագէտներին միաւորել էր իրենց ազգութիւնը: Նրանք Հայոց ցեղասպանութիւնը վերապրածների սերունդներն են, որոնք ճակատագրի բերումով յայտնուել են հայրենիքից դուրս: Բիենալէի տաղաւարի համադրողն Ադելինա Կիւբերեան ֆոն Ֆիւրշթենբերգն է:

«Յուցահանդէսը «Հայութիւն» (Armenity) կոչելու ինձ ներշնչել է ֆրանսերէն Armenia բառը, որն ինձ թուաց նոր ու յարմար՝ նկարագրելու հայ արուեստագէտների ու մտաւորականների անընդհատ հոսքի մէջ գտնուող մի սերունդ՝ ինքնասահմանման իր բազմազանութեամբ, որը, սակայն, պահպանել է աշխարհում լինելու սուբիէկտիւ գագաղթութիւնը», - իր մտայնացումը բնորոշել է հայկական տաղաւարը համադրողը:

Մայիսի 6-ին հայկական տաղաւարի բացմանը ներկայ են եղել ՀՀ մշակույթի նախարար Յասմիկ Պօղոսեանը, Իտալիայում ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան Սարգիս Ղազարեանը, Միլիթարեան միաբանութեան ընդհանրական արբանձապետ Եղիա Քիլոյեանը, Իտալիայի յայտնի արուեստագէտներ ու արուեստասէրներ: Տպագրուել է հայկական տաղաւարում ներկայացուած արուեստագէտների աշխատանքների կատալոգը, որի հրատարակութեամբ զբաղեցրել է Իտալիական SKIRA հրատարակչութիւնը:

Հայաստանը ներկայացնում էին պիւբլիքի ժամանակակից արուեստագէտներ Հայկ Ալվազեանը (Լիբանան/Ֆրանսիա), Նիկոլ Բեզլեանը (Սիրիա/ԱՄՆ), Աննա Բողիգոլյանը (Եգիպտոս/Քանադա), Հերա Բուքուբթաշեանը (Թուրքիա), Սիլվիա Տէր-Մեգուեր-

դիթեանը (Արժենթինա, Գերմանիա), Ալբին Անաստասը (Իրան/Պարսկաստան/ԱՄՆ), Միլիթար Կարապետեանը (Բելգիա), Ալքաթերինի Գեգիգեանը (Յունաստան), Անժելա Ռիչի Լուչչին (Իտալիա), Արամ Զիբիլեանը (ԱՄՆ), Նինա Խաչատուրեանը (ԱՄՆ/Ֆինլանդիա), Մելիք Օհանեանը (Ֆրանսա), Միքայէլ Օհանջանեանը (Հայաստան/Իտալիա), Ռոսանա Փալագեանը (Պրագիլիա), Սարգիսը (Թուրքիա/Ֆրանսա) եւ Հրայր Սարգսեանը (Սիրիա/Մեծ Բրիտանիա): Սիլվիա Ժամանակակից նկարիչների Armenia կազմակերպութեան կուրատորական գաղափարը ենթադրում է տարհանումն ու տարածաշրջանային հասկացութիւնը, արդարադատութիւնն ու հաշտեցումը, բնաւորութիւնն ու ճկունութիւնը: Սեպտեմբերի 5-ից 11-ն Արսենալի Piccolo ամֆիթատրոնը, Armenia-ի համատեքստում, կազմակերպելու է ներկայացումների, քննարկումների եւ վիտիոնախագծերի շարք՝ ներկայացնելով փոքրասիական ծագում ունեցող նկարիչների, գրողների եւ անկախ ռեժիսորների:

Վենետիկի բիենալէն կը գործի մինչեւ Նոյեմբերի 22-ը:

Վենետիկի բիենալէն համաշխարհային արուեստի ամենայայտնի ֆորումներից է՝ միջազգային ցուցահանդէս, որն անցկացւում է երկու տարին մէկ միջազգային ժիւրիի գլխաւորութեամբ: Այն հիմնադրուել է 1895-ին որպէս «Վենետիկ քաղաքի արուեստի միջազգային ցուցահանդէս»: Առաջին բիենալէին ներկայացուած էին 16 երկրի նկարիչների աշխատանքներ: Շուտով դրա հեղինակութիւնը միջազգային մասշտաբի հասաւ, իսկ երբ Երկրորդ համաշխարհայինից յետոյ՝ 1948-ին պարբերական կազմակերպումը վերսկսուեց, այն համընդհանուր ճանաչուած միջազգային աւանգարդի կենտրոն դարձաւ: 1930-ականներին բիենալէի շրջանակում երաժշտութեան, թատրոնի ու կինոյի միջազգային փառատօներ հիմնադրուեցին, 1975-ին՝ ճարտարապետութեան միջազգային ցուցահանդէս: 20-րդ դարի երկրորդ կէսին Վենետիկի բիենալէն ժամանակակից արուեստի կայացման գործում առանցքային դեր խաղաց:

### «ԱՆՈՒՇ» ՕՊԵՐԱՆ ԳԱԼԻՍ Է ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍ

Լոս Անճելոս են ժամանում փայլող աստղեր Յասմիկ Պապեանը, Շուշիկ Պարսումեանը, Եղիշ Մանուչարեանը եւ Պերճ Քարազեանը, Մայիս 23, 24, 30, 31-ին, «Ամբաստոր» թատերասրահում:



Լարք երաժշտական ընկերակցութիւնը կեանքի է կոչում «Անուշ»ը, օպերա, որ սահմանում է հայ ժողովրդին, համբաւաւոր «Ամբաստոր» թատերասրահում:

Յովհաննէս Թումանեանի գրած այս անմահ բալլադը օպերայի է վերածել Արմէն Տիգրանեանը: Նիւթը քաջածանօթ է մեզ: Հայ սիրահարների պատմութիւնն ընդհատուած է մարդկային ճնշումների եւ ընկերային կանոնների ժխտում: Անուշը սիրահարուած է իր եղբոր ընկերոջը՝ Սարոյին, որ հովիւ էր: Մոսին եւ Սարոն հարսանեկան խրախճանքում են եւ ոգեւորուած են՝ միասին ընկերական գոտեմարտ մղելու: Մոսին կատաղութեան է հասնում, երբ Սարոն Անուշին տպաւորելու համար զգեստում է Մոսին, խախտելով պատուի տեղական օրէնքը եւ նուաստացնելով իր ընկերոջը: Մոսի անսահման զայրույթը վերջանում է, երբ նա հրազէնը արձակում է Սարոյի վրայ: Սրտաբեկ Անուշը չի կարող ապրել առանց իր սիրոյ՝ Սարոյի: Նրա ցաւն էլ աւարտուած է, երբ ինքնիրեն նետում է ջրերի մէջ, որոնք հոսում են սարերից, որտեղ հանդիպել էր Սարոյին: Թուականներ. Մայիս 23, 24

Մայիս 30, 31  
Անուշ՝ Յասմիկ Պապեան  
Շուշիկ Պարսումեան  
Պրն. Արա Ահարոնեանի հետ նոյնպէս երկար տարիների ազգային-հասարակական գործունէութեան գործընկերներ ենք: Իր Ռամկավար Ազատական կուսակցութեան (ՌԱԿ-ի) անդամ լինելը երբեք չի խանգարել մեր հայրենասիրական նուիրուած գործունէութեանը:

Պրն. Արա Ահարոնեանը մեծ գնահատանքի է արժանի նաեւ ՌԱԿ-ի երախտաւորներին նուիրուած իր երկու հատորով՝ Ա. «Հերոսական դէմքեր Ռ.Ա.Կ.-ի» եւ Բ. «Երախտաւորների ուղին»: Ա. հատորը հրատարակուած է նաեւ անգլերէն՝ հայերէն գրել-կարդալ չի մացող հայ երիտասարդութեան համար, որպէսզի նրանք շարունակեն երախտաւորների ուղին:

Շնորհակալութիւն եմ յայտնում պրն. Արա Ահարոնեանին իր անկեղծ «Սրտի խօսք»-ի համար: Յանկանում եմ, որ աւարտին հասցնի ՌԱԿ-ի բոլոր երախտաւորներին նուիրուած հրատարակութիւնները իր բեղմնաւոր գրիչով:

Շնորհակալութիւն լուսահոգի Գուրգէն Սարգսեանի դուստրին՝ տիկին Ծովինար Նալբանդեանին (Սարգսեանին) իր գեղեցիկ ծաղկեփնջի, 2015-ի Ապրիլ 24-ին գրած Հայոց Յեղասպանութեան 100-րդ տարեկիցին նուիրուած բանաստեղծութեան եւ անկեղծ «Սրտի խօսք»-ի համար:

## ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

### ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly  
Enclosed a check for (one year)  
\* \$50,00 \* \$100,00 (first class) for USA  
\$ 125,00 (Air Mail) for Canada.  
\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----  
Address: -----  
City: ----- State: ----- Zip Code: -----  
Country: -----  
Tel :----- Email: -----

# ԱՐԱՍ ՍԵՓԵԹՃԵԱՆԻ՝ «ՁԱՅՆԵՐ ԼՈՒԻԹԵԱՆ ՍԵՁ» ԳԻՐՔԸ

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Գրասեղանիս հիւր-գիրքերէն է վերջին քանի մը ամիսներուն՝ արձակագիր, հրատարակագիր, գրաքննադատ եւ հրատարակիչ Արամ Սեփեթճեանի «Ձայներ Լուիթեան Մէջ» հատորը, գոր կ'ընթեռնուած յաճախ մենութեանս պահերուն, ճիշդ իրեն պէս՝ լսելու համար լուծութեանս մէջ հնչող ձայներ, որոնք կը բխին հայ մարդու էութեան խորքերէն, անոր արեան երակներուն, սրտի տրոփունէն...: Ձայներ՝ որոնք գոյութեան խորհուրդ են, արեան եւ հողի կանչ, զարթօնքի եւ յարուստեան կոչ ու աղաղակ են...: Այդ ձայները կը հնչեն հեղինակին մէջ, կ'ալեկոծեն իր ներաշխարհը, կը դառնան էջեր, որոնք «թերթ առ թերթ կը խուստեն զէպի իր յիշողութեանս աւազանը իբրեւ պատկեր եւ յուշ-քանդակ, կամ ցանուցիր եղած խոհերու յօդուածներ, որոնց մէկ-տեղումով կը կազմուին էջերը սոյն հատորին, իբրեւ խաչքուռ նուիրական»:

Պատահական չէ երբեք գիրքին հրատարակութիւնը Մեծ Եղեռնի դարադարձի նախաշեմին՝ 2014-ին, Սփիւռքի մայրաքաղաք համարուող Պէյրութի մէջ, որպէս խաչքուռ Հայոց Յեղասպանութեան 100-րդ տարելիցի անկշռելի խորհուրդին: Խաչքուռ՝ հիւստուած ցաւի, մորմոքի, ալլել վերածնունդի անխորտակելի յոյսի, յարուստեան տեսիլքի, պահանջատիրութեան պայքարի անխորտակելի կամքի, ազգային խղճմտանքի եւ արժանապատուութեան շիւղերով ցորենաբոյր... ուր հեղինակին ազգային-գաղափարախօսական խոհերուն եւ մտորումներուն հետ կը միահիւստուին գեղարուեստական շունչով եւ ոգիով գրուած ապրումները՝ Ապրիլեան խորհուրդին, մեր մեծ տառապանքին, մեր մշակոյթի վեհապանծ կոթողներուն, հայ գիր ու գրականութեան, մեր պատմական սիրանքներուն եւ հայոց հողին դէմ յանդիման...:

«Խորհուրդ Ապրիլեան» խորագրեալ՝ գիրքի առաջին բաժնին մէջ, հեղինակը կը վերապրի Յեղասպանութեան պատճառած անչափելի կորուստներու կսկիծը՝ հողային կորուստ, մարդկային կորուստ, մեր ստեղծագործ հանճարի կորուստ, մեր անցեալի ժառանգութեանց կորուստ, տալով իւրաքանչիւրին մանրամասնեալ պատկերը, հաստատագրելով որ Յեղասպանութեան մեծագոյն պահանջքն է՝ ու կը մնայ, տէր կանգնիլ մեր դարաւոր հողային իրաւունքին, նորահաս սերունդին փոխանցել ջահը պահանջատիրութեան, բոցը հայրենասիրութեան, կի'րքը հանդէպ հայ գիրին ու գիրքին, հայ մշակոյթին եւ արուեստին: Անյետաձգելի խստապահանջութիւն կը համարէ՝ Սփիւռքի մեր գաղութներու վերակազմակերպումը, անոնց վերածումը միաձոյլ ամբողջութեան մը, մեզ իրարու միացնող Ազգային Գաղափարախօսութեամբ մը, շեշտելով յատկապէս՝ Սփիւռքի Համահայկական Գերագոյն Խորհուրդը մը կեանքի կոչելու հրամայականը: «Անհրաժեշտ է վերամիւստորութեան մեր ազգային բաղադրատարրերուն... Հարկ է, որ ան (հայրենի պետականութիւնը) համարմբէ սփիւռքահայութիւնը, որմէ բխած ներկայացուցչական խորհուրդը իր լիբրալ մասնակցու-

թիւնը պիտի բերէ Ազգային Գերագոյն ժողովին, հայրենի պետութեան հովանիին ներքեւ»: Ան անհրաժեշտ կը համարէ հայկական դիմագրութեան նոր մտածողութիւն սերմանել հայ ժողովուրդի հոգիէն ներս՝ երբ բիրտ ուժի տէրերը իրենց ձեռքին մէջ կեդրոնացուցած են հակակշիռը տնտեսա-քաղաքական հօր լծակներու, երբ կը փորձեն անոնք խեղաթիւրել պատմական ճշմարտութիւնները, դահիճը ներկայացնելով իբրեւ զոհ, երբ բազում միջոցներով կը փորձեն սնանկացնել մեզ մեր ազգային-հայրենասիրական հիմնական ուղեգիծէն եւ մեր մէջ սերմանել պարտուողական ոգի...: Տագնապահար է անոր հոգին. «Մեր երազները կը մնան տակաւին փշրուած, այնքան ատեն որ Արեւմտահայաստանի ճակատագիրը կը մնայ անստոյգ, Արցախի հայապատկան հողերն ազատագրուած՝ կը մնան աշխարհի անսիրտ լուծմայափոխներու սեղանիկներու վրայ իբրեւ սակարկելի առարկաներ, երբ Տէր-Չօրէն ու Չանդրըն մինչեւ Սուվալիթ ու Պաքու կազմակերպուած սպանդներու եւ Չարդերու հեղինակները կը մնան անպատիժ, երբ հայկական Յեղասպանութիւնն ամբողջ կը մնայ ուրացումի եւ մոռացումի ենթակայ...»: Չուգահեռաբար, մատը դնելով արեւնոտ վէրքի մը վրայ, կորովի հրապարակագիրը ցաւով կ'արձանագրէ որ վերանկախացած պետականութեան առաջին քսանամեակին՝ սպիտակ արիւնահոսութիւնը՝ արտագաղթը, պատճառ եղած է որ 1990-ի 3.75 միլիոն հաշուող ազգաբնակչութեան թիւը նուազի եւ հասնի մերօրեայ 2.5 միլիոնի: Հետեւաբար, մեծագոյն մարտահրաւէրը գոր կը դիմագրաւէ հայրենի պետականութիւնը այսօր պիտի ըլլար՝ նոր թափ տալ ազգահաւաքի կենարար ուժին, ու հնգամեայ փլաններով՝ ազգաբնակչութեան թիւը հասցնել 5 միլիոնի: Մինչ այդ, կ'եզրակացնէ հեղինակը, պատրաստ ըլլանք դիմակալելու ամէն մարտահրաւէր ու զոհողութիւն, յանուն մեր անժամանցելի դատին եւ ապագայի յաղթանակին:

«Ձայներ Լուիթեան Մէջ» խորագրեալ՝ գիրքի երկրորդ բաժնին մէջ, ընթերցողը յատկապէս կը պարուրուի հոգեպարար ապրումներով՝ Չուարթնոց տաճարի աւերակներու համալիրին մէջ, որ կը դառնայ ուխտատեղի հեղինակին մտածումներուն... Համալիր մը՝ այս, որուն համահաւասարը, ըստ իրեն՝ ժայռանիստ Գեղարդն է, եւ ուր թէքէեանի տողերու ներշնչումով՝ քար ու քարայր կը վերածուին բարձր բերդին հաւատքի...:

Դարձեալ թէքէեանի՝ «Երբ Օրը Գայ Վերջապէս» տողը ընտրելով որպէս բնաբան, հեղինակը իմաստալից կերպով կը նշէ. «Երբ Օրը գայ վերջապէս, ու հայ մարդը թօթափէ մերօրեայ «աւատապետութեան» շղթաներու լուծը, որ կը թելադրուի մեզի օտար միջամտութիւններով, անպայմանօրէն պիտի հասնի ան բանաստեղծ հոգիներէն ճառագայթած գաղափարն ու ոգին միաձուլող գերագոյն իմաստութեան՝ ինքնաճանաչողութեան, Միացեալ Հայաստանի երազէն առաջ ու գերիվեր՝ Միացեալ Հայութեան խորհուրդին:

«Գիր եւ ձանապարհ» խորագրեալ երրորդ բաժնի գիրքին

գերագանցօրէն պանծացումն ու վերարժեւորումն է հայ գիրի, հաւատքի ու մշակոյթի: Արդարեւ, Միաձայնեալ խորհուրդին պիտի յաջորդէր՝ հայ միտքի լոյսին ձօնուած մեսրոպականոց տաճարն ու խորանը, Ա. Բ. Գ. Ի հրաշքով յաւերժացած, իբրեւ գրական հայ ժողովուրդի ինքնապահպանման եւ բազմադարեան խիզախումներուն, նուաճումներուն: Հայ մշակոյթի տօնին իմաստաւորումը այնքան արդիական կը հնչէ բոլոր ժամանակներուն համար ալ... Հայ մշակոյթի կամ թարգմանչաց տօնը «տօնն է հայ ժողովուրդի իմացական արժէքներուն եւ արժանիքներուն փառաբանութեան, Հայ գրականութեան եւ անոր մշակներուն տօնը, ու միակ առիթը որ պիտի վերախմբէ բազմաճիւղ ընթացքը մեր հոգեմտաւոր գետերուն ու գետակներուն, ու պիտի կազմէ Մայր Երակը մեր դէպի Ապագան ընթացող հայ ժողովուրդի պատմական առաքելութեան»: Եւ այնքան հրատապ հնչող հարցումը կամ հարցումներն. «Պիտի կարենա՞նք տէր կանգնիլ մեր մեծ թէ փոքր Լոյսի տաճարներուն ու խորաններուն... Պիտի կարենա՞նք գորաշարժի ենթարկել մեր նիւթական թէ իմացական կարողութիւնները, որպէսզի ցոյց տանք արար աշխարհին, թէ մեր հոգիի ու միտքի լոյսի խորանները չեն երբեք առեւտրական գործառնութեանց կեղրոնատեղիներ, եւ այդ խորաններու վրայ սպասարկող աշխարհիկ թէ հոգեւոր մշակներ կոչուած են շարունակելու թարգմանչաց վարդապետներով սկսուած մեր գործը...»: Սա իրաւամբ կը դառնայ նաեւ զգաստացման եւ սթափումի կոչ՝ բոլոր անոնց, որոնք գրպանային մտածողութեամբ եւ առեւտրական հաշուարկներով կը փակեն դպրոց ու թերթ, կ'արհամարհեն գիր ու գրականութիւն...:

Գիրքի վերջին բաժինը կը կազմէ հայրենի օրագրութիւնը, գրուած 1987-ին, յետ իր հայրենական այցելութեան՝ Սփիւռքահայութեան հետ Մշակութային կապի կոմիտէի հրաւերով, խորագրեալ՝ «Պահեր ու Խոհեր Հայրենիքէն», ուր տող առ տող ընթերցողը հեղինակին հետ կարծէք համահունչ կ'ապրի հայրենիքին նկատմամբ տածուած սէրն ու կարօտը, յոյզերն ու խռովքները, խոհերն ու մտորումները, քանզի ան մեր բոլորին մայրն է, ինչպէս իրաւամբ կը գրէ

հեղինակը: Ան կը խորհրդածէ հաւատքի իւրօրինակ քննութեամբ մը. «...բացի հայրենիքէն, մնացեալը պատրանք է: Իսկ սփիւռքը, կորուստի դատապարտուած ազգային դրամագլուխ մը՝ որուն ճակատագիրն է հաւաքական տեղաշարժ, ժամանակաւոր յուսաւառ կայք, ապա՝ յուսախաբութիւն եւ տեղաշարժ դէպի հեռաւոր ափեր... ի խոյզ անհատական բարեկեցութեան»: Եւ կը մտորի, որ հայրենի հողին հրաշքն էր որ ծնունդ տուաւ նորահաս սերունդներու... որոնք կը ցանց զսպել իրենց արցունքը, երբ 1937-ն տեղի կ'ունենար... կը ցանց Բ. Աշխարհամարտին 664 հազար զինուոր ուղարկելու անապատ...: Տակաւին, «նոյն աչա հայն է որ պաշտօնապէս կը ներկայանայ իբրեւ պահանջատէր Ղարաբաղի հայկական հողերուն...»: Հայրենասիրական վառ ապրումներու ներշնչարան կը դառնան իր սրտայոյզ տողերը նուիրուած իր հայրենական հոգեպարար այցելութեան, երբ հայրենիքն ու սփիւռքը կը ողջագուրուէին սիրոյ սեղաններու շուրջ, գրական-գեղարուեստական երեկոներուն, հանդիսութիւններուն ընթացքին... Եւ ան կը գոչէ սփիւռքահայուն յատուկ վիպային ապրումով. «Դէ՛հ, Ե՛կ վարդապետ, ու մի՛ խելագարիր...»:

Իրեն հետ մենք ալ պիտի ըսէինք ի խորոց սրտի. «Դուն՝ ափ մը հող սրբազան, մեր պապենական Մեծ ու Փոքր Հայքէն, երկիր՝ Նայիրիէն... Դուն, Կաթողիկէ ու Մատենադարան, Աստղադիտարան ու Բնութիւն հայրենի... Դունք, Միտքի ու Բազուկի անխոնջ աշխատաւոր ընկերներ... Եւ Յարգանք քեզ, հայրենի ժողովուրդ, որ... քու այգաբացովդ նկարագարողեցիր մեր պատմութեան էջերը: ...Մեր վերջին հասցէն՝ Երեւանն է»:

Հայոց Յեղասպանութեան հարիւրամեայ տարելիցի շեմին, «Ձայներ Լուիթեան մէջ» հատորը գերագանցօրէն ազգային ինքնաճանաչումի եւ ինքնագիտակցութեան հրաւէր է, զգաստութեան եւ սթափութեան կոչ, ինչպէս նաեւ ուղեցոյց փարոս՝ նոր որակ եւ ուժակաւորութիւն հարորդելու մեր պահանջատիրութեան պայքարին եւ ազգի ու հայրենիքի լինելութեան:

Վարձքդ կատար, անխոնջ մշակ հայ գիր ու դպրութեան, սիրելի Պրն. Արամ Սեփեթճեան:

## VA Print Media

Book Printing • Hard Covers • Year Books  
Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան Եւ  
Հին Գիրքերու Նորոգութեան Համար  
Հեռաձայնել՝ ՎԱՀԷ ԱԶԱՊԱՀԵԱՆԻՆ



**Vahe Atchabahian**  
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104  
**Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924**  
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

### ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ԶԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆ ԶԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԶԱՐԻԻՐԱՄԵԱԿ



#### ԼԻՆՏԱ ԳԱՆՏԻԼԵԱՆ

Անարատ Յղու թեան Հայ Քոչ-րերու Վարժարանը, ինչպէս ամէն տարի, այս տարի եւս իր աւօրեայ ծրագիրներու կողքին մշակեց մեծ եղեռնի հարիւրամեակը ոգեկոչող յատուկ ծրագիրներ, ուր հաւատարիմ «Կը յիշեմ եւ կը պահանջեմ» լրջունգին աշակերտները պահանջատէր ոգիով պատրաստուեցան դիմաւորելու հարիւրամեակի յաջորդող տարիները՝ ապագային ըսելու համար յիշեցինք պահանջեցինք եւ վերադարձուցինք:

Այս տարին Յեղասպանութեան հարիւրամեակի յիշատակին նուիրուած ձեռնարկները տարուան սկիզբէն իսկ սկսան գործադրուիլ Հայկական բաժանմունքի ուսուցչուհիներուն կողմէ՝ համագործակցաբար տնօրէնութեան:

Առ այդ, տեղագրուեցաւ հայոց Յեղասպանութեան հարիւրամեակը նշող յուշակոթող մը վարժարանիս պարտէզին մէջ, որուն պաշտօնական բացումը տեղի պիտի ունենայ յետագային:

Ութերորդ դասարանի աշակերտները իրենց հայերէն ուսուցչուհիի օգնութեամբ պատրաստեցին հայկական գրաւուած նահանգներու մասին տեղեկութիւններ սահիկներու ցուցադրութեամբ, եւ ներկայացուցին աշակերտութեան իւրաքանչիւր ամսուան 24-ին, ծանօթացնելով նահանգ մը իր մշակոյթով, բնաշխարհով եւ պատմութեամբ ապա ներկայ իրավիճակը եւ անոր պատճառները:

Եօթերորդ դասարանի աշակերտները ի յիշատակ Յեղասպանութեան անթաղ նահատակներու, մեծ խանդավառութեամբ տունկեր ցանցեցին՝ իրենց դասարանի միջանցքին մէջ գոյու թիւն ունեցող հողաշերտը կանաչապատելով. եւ տարածելով ապրելու եւ ապրեցնելու գաղափարը մեռցնելու եւ ոչնչացնելու գաղափարին դէմ:

Եւ այսպիսով 2015 տարուան գրեթէ բոլոր առիթները պատճառ եղան որ աշակերտները այլազան միջոցառումներով հաղորդուին նահատակներու ականջով եւ ապրին այդ միջոցառումով, ինչ որ պիտի գործադրէ իրենց պատկանելիութեան զգացումը իր կարգին զօրացնելով պահանջատէրի հոգեվիճակը:

Ութերորդ դասարանէն 2 աշակերտուհի մասնակցեցան Կիրակի 15 Մարտի յետմիջօրէին վերապրածներու յիշատակի նուիրուած հանդիսութեան Արարատ Տան Տէնօքմէճեան սրահին մէջ արտասանելով եւ վերապրած անձի մը կենսագրականը ընթերցելով:

Չորեքշաբթի 18 Մարտի առաւօտեան վարժարանիս 3-4-5-րդ

դասարաններու աշակերտները Տնօրէնութեան եւ ուսուցիչներու ընկերակցութեամբ, մասնակցեցան Մոնթեպելլոյի Յեղասպանութեան Յուշարձանի մօտ միջոցառական հաւաքի եւ հոգեհանգստեան պաշտօնին: Չորեքշաբթի 25 Մարտի յետմիջօրէին տեղի ունեցաւ ներկայացում մը Ալիծ Աղպապեանի կողմէ «Ծալապատիկ» Գիրքին, ուր աշակերտները տեղեկ եղան Յեղասպանութենէ մագապուրծ փրկուած իւլեակներու կամքի զօրութեամբ վերընձիւղման գործընթացին:

Կիրակի 12 Ապրիլի երեկոյան 7-րդ դասարանի աշակերտները մասնակցեցան Քրեանդա Հովիտի Հայ Դատի Յանձնախումբի կազմակերպած Յեղասպանութեան ոգեկոչումի յայտագրին:

Ուրբաթ 17 Ապրիլի վարժարանիս աշակերտները իրենց մասնակցութիւնը բերին գծագրութիւններով Լոս Անճելոսի հայկական Յեղասպանութեան ոգեկոչման միացեալ մարմնի կողմէ կազմակերպուած աշակերտական ցուցահանդէսին, պատրաստութեամբ վարժարանիս գծագրութեան ուսուցչուհի Տիկին Մանուէլլա Քոյսեանի:

Իսկ Հինգշաբթի 23 Ապրիլի ամբողջ օրը տեղի ունեցան հայոց Յեղասպանութեան հարիւրամեակի նուիրուած միջոցառումներ: Առաւօտը սկսաւ աշակերտական Սուրբ Պատարագով, պատարագիչն էր Կաթողիկէ Համայնքի առաջնորդ՝ Գերապայծառ Տէր Միքայէլ Մուրատեան, որ օրուան պատշաճ քարոզով պատրաստեց աշակերտները օրուան յաջորդող ծրագիրներուն: Յետ Պատարագի վարժարանիս բակը համիւբուեցան աշակերտները եւ քար լուծեցին մտտեցին՝ ունկնդրելով հարիւր անգամ հնչող զանգակի ձայնին, որ ստեղծեց կրօնական եւ յուզիչ միջոցառում մը, որմէ ետք տեղի ունեցաւ հոգեհանգստեան պաշտօն նուիրուած մէկուկէս միլիոն հայ նահատակներու յիշատակին եւ ծաղիկներու գետեղում ծիծեռնակաբերդի յուշարձանի մանրակերտին շուրջ: Այս հանդիսութեան ներկայ էին Լա Քրասէնթայի Հայ Կեդրոնէն ներկայացուցիչներ, Հայ Դատի ներկայացուցիչներ եւ Կլենտէլլի Մոնթրոզի եւ Լա Քրեստայի պետական պաշտօնական անձնաւորութիւններ նաեւ գոնկրէմէն Ատամ Շիֆի գրասենեակէն ներկայացուցիչ մը եւ տեղական թերթի թղթակիցներ: Հոգեհանգիստէն ետք 5-6-7-րդ դասարանի աշակերտները երեք լեզուներով՝ Հայերէն, Անգլերէն եւ Սպաներէն յաջորդաբար

Շաբ.ք էջ 18

### ԶԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻ ՆՇՈՒՄԸ՝ ՄԵՐՏԻՆԵԱՆ ՎԱՐժԱՐԱՆԵՆ ՆԵՐՍ

«Այսօր չարիք է մոռանալ մեր որդիք, թող որդ աշխարհի հային կարգայնացի մատիցնի»:

Ա. Ահարոնեան



Այդքան չարիք չեն մոռանար մեր որդիք: Վկայ՝ ի սփիւռս աշխարհի տեղի ունեցած հայկական Յեղասպանութեան 100 ամեակը նշող ոգեկոչումները, արդարութեան քայլարշաւները, նորաստեղծ արուեստի ու գրականութեան գործերը, մէկ խօսքով՝ 100 տարուան երկունքէ մը ծնունդ առած ճանաչում ու հատուցում պահանջող երիտասարդական ձայնը: Որոտընդոտ պոռթկումն է ան ամբողջ ազգի մը, որ այլեւս զոհի, անկեայի վիճակին մէջ չի գտնուիր, այլ առողջ իրաւատէրն է իր հայրենի հողերուն, հարստութեան. ահա թէ ինչու, 100 ամեակի լրջունգը արդարօրէն ընտրուած է՝ « Կը յիշեմ, կը պահանջեմ »:

Սփիւռքի ամբողջ տարածքին, հայ դպրոցը իր առաքելութեան մէջ առաջնահերթ պարտականութիւն կը նկատէ հայ մանուկը

դաստիարակել հայկական նկարագրով, անոր ստրվեցնել իր մայրենի լեզուն, իր ազգի դարաւոր պատմութիւնը, անոր փոխանցել իր մշակութային ժառանգութիւնը եւ վերջապէս, զայն դարձնել հայկական բունագրաւուած հողերուն իրաւական տէրը:

2015 թուականին, հայ ժողովուրդը պիտի յիշատակէր 20րդ դարու առաջին Յեղասպանութեան 100 ամեակը. առիթն էր, որ հայ աշակերտը խորապէս ծանօթանար անոր տխուր էջերուն, հոգեպէս եւ մտովին ապրէր մէկ ու կէս միլիոն անմեղ նահատակներուն ցաւն ու տառապանքը, բաղդատէր անցեալն ու ներկան, եւ փառք տար Աստուծոյ հայ ժողովուրդի գոյութեան եւ անոր վերածնունդին համար:

Ահա՛, այս ուղղութեամբ ըն-

Շաբ.ք էջ 19

### ԲԱՐԻ ԵՐԹ ՍԱՅԱԿ-ՄԵՍՐՈՊ ԶԱՅ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՎԱՐժԱՐԱՆԻ 35 ԱՄԵԱԿԻՆ



#### ՍՕՏԱ ՊԱՏԱԼԵԱՆ

Սահակ-Մեսրոպ Հայ Քրիստոնեայ Վարժարանը 35 տարեկան է: Այս ուրախ առիթով, դպրոցիս ճաշկերոյթի յանձնախումբը կազմակերպեց յատկանշական եւ պատմական ձեռնարկ մը, որ տեղի ունեցաւ Մարտ 22, 2015-ի յետմիջօրէին Renaissance-ի շքեղ սրահին մէջ: Ուրախալի էր հոն տեսնել 400-է աւելի Սահակ-Մեսրոպի հիմնադիրներ, հոգաբարձուներ, տնօրէններ, շրջանաւարտներ, բարեկամներ եւ ծնողներ:

Ակներեւ էր, սրահին մուտքին, ընկերային ժամուն հանդիպելու խոռոչներում բազմութեան, որոնք գիրար կ'ողջունէին, կ'ողջագրուէին եւ հին յիշատակներ կ'արթննային անոնց սրտերուն եւ հոգիներուն մէջ:

Արդէն ժամանակը հասած էր սկսելու պաշտօնական յայտագիրը: Առաջին առիթով յանձնախումբի ատենապետուհի՝ Տիկ. Սօսի Աստուրեան բարեգալուստի խօսքերով հանդէս եկաւ, ներկաներուն մաղթելով բարի եւ ուրախ վայելում այս յիշատակելի երեկոյին համար:

Ապա դպրոցի հիմնադիրներ, նախկին եւ ներկայ տնօրէններ, եւ Սահակ-Մեսրոպի տարբեր տարիներու շրջանաւարտներ, խորխտ քայլերով մուտք գործեցին դէպի սրահի կեդրոնը, որոնք յոտնկայս դիմաւորուեցան ներկաներու կողմէ ծափողոցներով:

Մինչ այդ Տիկ. Աստուրեան ներկայացուց օրուան հանդիսավարները՝ Թամար Պարսումեան 2009-ի շրջանաւարտուհի եւ Արի

Շաբ.ք էջ 19

### ՄԵՆՔ ԿՈՒՁԵՆՔ ՈՒՏԵԼ ԱՅՆ ԲԱՆԸ, ՈՐՈՒՆ ՊԱԿԱՍԸ ԿԱՅ ՄԵՐ ՄԱՐՄՆԻՆ ՄԷՋ

Կը պարզուի, որ մեր սննդաչին նախասիրութիւնները կապուած են սննդարար նիւթերու պակասի, հորմոնալ եւ մեթապոլիք փոփոխութիւններու, հոգեբանական խնդիրներու հետ:

Տուրմ՝ աշխատանքային օրուան կիսուն յանկարծ տուրմ ուտելու գորաւոր ցանկութիւն կը զգաք, կը դառնաք անուշադիր, ցրուած ու կը մտածէք միայն տուրմի մասին: Ասիկա կրնայ կապուած ըլլալ մակնեգիումի պակասին հետ: Քաղցր ուտելու ցանկութիւնը կրնայ նաեւ խօսիլ քրոմի, ֆոսֆորի եւ շաքարի պակասի մասին:

Լուծումը՝ ընկոյզ, հացահատիկ, դդումի սերմեր, կամ թարմ միրգեր ու պրոքտի ուտելը կու տայ անհրաժեշտ լուծումը:

Կծու՝ արդէն տան ամբողջ սեւ պղպեղը կերած էք ու ձեռքը չի լի պղպեղի՞ն կը տանիք: Ձեր մարմինը կծու ուտելիքի պէտք ունի քրտնարտադրութիւնը դրդելու եւ «գովացնելու» համար: Հաւանական է՝ պատճառը գինքի, ծծումբի պակասն է կամ վահանագեղձի հետ կապուած խնդիրները:

Լուծումը՝ ոչ իւրոտ միսը, ծովամթերքները, սիսորը, կանաչ բանջարեղէնը կը լրացնեն այդ բացը...

Միս՝ կ'երագէ՞ք մեծ սթէյքի մասին: Ասիկա կ'հազանգէ B կենսանիւթի, մակնեգիումի, ֆոսֆորի կամ երկաթի պակասի մասին: Սպիտակուցային սնունդի հանդէպ հակուածութիւնը կրնայ նաեւ վկայել շաքարի մակարդակի բնականոն վիճակէն շեղման մասին: Եւ ի հարկէ ամենատրամաբանական բացատրութիւնը՝ շատոնց միս չէք կերած:

Լուծում՝ ակնյայտ է, պէտք է ուտէք հաւկիթ եւ միս՝ առանց մոռնալու բանջարեղէնի մասին:

Աղ՝ կ'ուտէք pop corn, չիփսեր, տապկուած գետնախնձոր եւ չէ՞ք կրնար կանգ առնել: Հաւանական է՝ ձեր մարմինը նադրիումի պակաս կը զգայ: Ասոր կրնան նպաստել ճնշախոն ու ջրազրկումը: Աղի որեւէ բան ուտելու ցանկութիւնը կը խօսի նաեւ մակերիկամներու անբաւարարութեան եւ գինքի պակասի մասին:

Լուծում՝ ձեր սննդակարգին մէջ ընդգրկեցէք վարունգ, նեխուր, ձուկ եւ օրը 8-10 բաժակ ջուր խմեցէք:

Հաց եւ այլ ածխաջրային մթերքներ. Անդիմադրելի ցանկու-

թիւն ունիք հաց ու մաքարոն ուտելու: Դուք արեան մէջ շաքարի ցած կամ ինսուլինի բարձր պարու-նակութիւն ունիք: Ածխաջուրներու պակասը կրնայ սերոզոնի անբաւարարութեան հետեւանքով տրամադրութեան տատանման եւ ընկ-ճախտի պատճառ ըլլալ:

Կազաւորուած ըմպելիներ. Չէ՞ք կրնար դիմադրել cola եւ նմանատիպ խմիչքներ գնելու գայթակղութեան: Հաւանական է՝ ձեր մարմինը քալիումի պակաս կը զգայ: Եթէ անընդհատ պաղ խմելիքներ կ'ու-զէք, հաւանական է հեմոկոպիլի կամ երկաթի պակաս ունիք:

Լուծում. ամէն անգամ հիւթ գնելու ցանկութեան պարագային կարելի է ուտել կտոր մը պանիր կամ՝ ջուր խմել: Օգտագործեցէք նեխուր, ճակըղեղ, բուսածուխ, կաթ եւ մրգային մածուկ:

Սուրճ եւ թէյ. Սուրճի կամ թէյի անբացատրելի կարիքը կրնայ յառաջանալ C կենսանիւթի կամ երկաթի պակասի պարագային: Քա-ֆէյինը, որ կայ ե՛ւ սուրճի ե՛ւ թէյի պարունակութեան մէջ, կը դրդէ գլխուղեղին աշխատանքը եւ ատ-րենալինի արտազատումը, որ թոյլ կու տայ թարմ ու լաւ տրամադրու-թեամբ ըլլալու օրուան ընթաց-քին: Ինչպէս նաեւ, թէյի ու սուրճի հանդէպ յանկարծակի յառաջացած սէրը կրնայ ֆոսֆորի եւ ծծումբի անբաւարարութեան ժամանակ հանդիպել:

Լուծում. Փորձեցէք օգտագոր-ծել առողջ սնունդ՝ թարմ բանջա-րեղէն, չիբրեր:

Ճարպ՝ իւրոտ ուտելիքի հան-դէպ յանկարծակի սէրը կրնայ խօ-սիլ քալիումի կամ անփոխարինելի ճարպաթթուներու պակասին մասին: Ասիկա կրնայ տեղի ունե-նալ նաեւ սննդականոնի ժամանակ կամ վատ տրամադրութեան:

Լուծում. իւրոտ ուտելիքի քաղ-ցը կը յագեցնեն ստեպոլինը, աւոքա-տոն, ընկոյզը եւ այլն: Կանաչ բանջարեղէնը կը նպաստէ քալ-սիումի պաշարներու համալրման: Իսկ տրամադրութիւնը կրնայ բա-րելաւել ֆիզիքական վարժութիւնը:

Ինչպէ՞ս չ'իյնալ ծայրայեղու-թիւներու գիրկը. Տարբեր սննդամ-թերքներու չարաչահումէն խուսա-փելու համար փորձեցէք հաւասա-րակշռուած ուտել: Զբաղեցէք մար-գանքով, որ կ'օգնէ շեղելու սնունդի մասին միտքերէն: Շատ ջուր խմե-ցէք: Թոյլ մի տաք որ զգացումները կառավարեն ձեզ:

### 5 ՄԹԵՐՔ, ՈՐՈՆՔ ՄԱՐՄԻՆԸ ԿԸ ԹՈՒՆԱԶԵՐԾԵՆ ԱԻԵԼԻ ԼԱԻ, ՔԱՆ ՈՐԵԻ ԱՅԼ ԴԵՂԱՄԻՋՈՑ

Մարմինը թունազերծելու կամ «մաքրելու» համար այժմ ստեղծ-ուած են բազմաթիւ դեղամիջոց-ներ, սակայն մինչեւ վերջին նորա-մուծութիւնները միշտ եղած են մթերքներ, թուրմեր կամ աւան-դական միջոցներ, որոնցմով հնա-րաւոր եղած է թունազերծել մար-մինը: Շարք մը մթերքներու մէջ կան մարմինը «մաքրելու» օգնող օգտակար նիւթեր ու հանքանիւ-թեր, որոնք ամբողջութեամբ կրնան փոխարինել յատկապէս քիմիական բաղադրութեամբ դեղամիջոցնե-րը: 5 մթերք, որոնք օգտագործելէ յետոյ ձեր մարմինը կը դառնայ «նորածին»:

Ճակնդեղ - Ճակնդեղը մարմնի թիւ մէկ մաքրուհի է: Անիկա կը պարունակէ բջջանք (ֆայպր), ֆոս-ֆոր, վիթամին C եւ շաք մը եւ այլ օգտակար նիւթեր, որոնք կը նպաս-տեն մարմնէն աւելորդ ու անպէտք մնացորդներու չեզոքացման: Ճակն-դեղը կը մաքրէ ստամոքսն ու աղիք-ները: Անիկա նաեւ կը պարունակէ այնպիսի նիւթեր, որոնք կ'օգնեն լեարդին ազատելու թոյներէ:

Կաղամբ - Կաղամբը կը պա-րունակէ մեծ քանակութեամբ սննդային հիւստած քեներ, որոնք կ'օգնեն մարմնին իրար միացնելու սննդային ծանր մետաղներն ու թոյները եւ դուրս հանելու զանոնք աղիքներուն միջոցով: Կաղամբի բաղադրութեան մէջ կը մտնեն կենսական թթուներ, որոնք կը բարելաւեն ստամոքսին եւ աղիք-ներուն աշխատանքը: Կաղամբը նաեւ ունի բացառիկ վիթամին U, որ կը չեզոքացնէ վտանգաւոր քիմիական նիւթերը եւ ստամոքսի խոցի պա-րագային քիչ, թէ շատ կը նպաստէ, որ վէրքը փակուի:

### ԱՌՕՐԵԱՅԻ ՄԷՋ ՔԱՅԱԽԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ 10 ԱՆՍՈՎՈՐ ՄԻՋՈՑ

Լուացարանի խցանումը վերցնելու համար՝ նախ լեցնել կէս գաւաթ սոտա, ապա աւելցնել մէկ գաւաթ քացախ: Արդիւնքը շատ շուտ կ'երեւի:

Կպչուն ժապաւէնի հետքերը մաքրելու համար՝ քացախը քսել անհրաժեշտ հատուածին, ձգել քանի մը վայրկեան, ապա լաւ մաքրել:

Վերացնելու համար տհաճ հոտը: Եթէ աղբամանէն տհաճ հոտ կու գայ, քիչ մը հաց առէք, վրան քացախ աւելցնուցէք եւ դրէք աղբամանին մէջ: Ամբողջ գիշեր ձգեցէք եւ առաւօտեան արդէն տհաճ հոտ չէք զգար:

Տարբեր բաներ մաքրելու միջոց: Քացախն ու ջուրը խառ-նել, քանի մը կաթիլ մաքրող դեղ աւելցնել վրան, ապա լաւ խառնել:

Թակարդ ճանճերու համար: Խնձորի քացախը լեցնել գաւաթի մէջ, ճաշի տոպրակով փակել գայն՝ բաց ձգելով միայն փոքր

Սխտոր - Սխտորը կը պարու-նակէ աւելի քան 400 օգտակար նիւթեր ու տարրեր: Առաջին հեր-թին անիկա հիանալի միջոց է արեան մէջ քոլեսթերոլի մակար-դակը իջեցնելու համար:

Սխտորը կը մաքրէ երակնե-րը, կը չեզոքացնէ թոքախտի ցու-պիկը: Սխտորի միջոցով կարելի է պայքարիլ աղիքներուն մէջ յայտ-նուող որդերուն դէմ: Անիկա գա-նոնք դուրս կը շարտէ կալի հետ միասին:

Սոխ - Սոխի գլխաւոր արժէ-քը ֆիդոնցիան է, որմով հարուստ են նաեւ եթերային իւղերը: Ֆի-դոնցիա միջոցով սոխը կը կատա-րէ հակաթոյն այնպիսի պաշտօն, որ նոյնիսկ չեն կրնար ամենալաւ դե-ղամիջոցները: Սոխը նաեւ կը բա-րելաւէ մարսողութիւնը, կ'օգնէ ստամոքսին առանց ծանրաբեռն-ուածութեան ու արագ «մաշեցնե-լու» ճաշը:

Խնձոր - Խնձորը կը պարու-նակէ մեծ քանակութեամբ փեզդին եւ բջջանք (ֆայպր), որոնք կը կարգաւորեն ստամոքսի եւ աղիք-ներու աշխատանքը: Խնձորը նաեւ կը նպաստէ ստամոքսահիւթի ար-տադրութեան եւ կ'ազատէ փորկա-պութենէ:

Խնձորին միջոցով կարելի է պայքարիլ այնպիսի վարակներու դէմ, ինչպէս A խումբի վարակնե-րը, սղափրլագոզը, տիգենթերիան եւ բրոդէյը:

Ըստ սննդագէտներու՝ այս մթերքները աւելի լաւ կը թունա-զերծեն մարմինը, քան որեւէ այլ դեղամիջոց: Անոնք նաեւ կը պա-րունակեն շաք մը կենսանիւթեր, որոնք կը նպաստեն մարմնի դի-մադրողականութեան բարձրացման:

### ԴԵՄՔԻ ԿՆՃԻՌՆԵՐԵՆ ԱԶԱՏԵԼՈՒ ՏՆԱՅԻՆ ՄԻՋՈՑ

Եթէ դէմքին վրայ կնճիւղներ նկատած էք, կրնաք պատրաստել հրաշալի դիմակ մը, որ կարճ ժամանակամիջոցի մը մէջ պիտի լուծէ այդ խնդիրը: Բացի պարզ եւ մատչելի ըլլալէն, այս դիմակը ամբողջովին բնական է եւ կը քաշէ մորթը: Ասիկա հրաշալի միջոց է հանդիպման կամ որեւէ երեկոյթի երթալէ առաջ օգտագործելու համար, քանի որ այս դիմակին արդիւնքը անմիջապէս կը նկատուի՝ անգամ առաջին օգտագործումէն ետք:

Բաղադրութիւն.- 1 ապուրի դգալ corn flour, 5 ապուրի դգալ թարմ քամուած ստեպոլինի հիւթ, 1 ապուրի դգալ թթուասեր:

Պատրաստման եղանակը.- Կէս գաւաթ ջուրի մէջ լուծել corn flour-ը: Այնուհետեւ գայն լեցնել

փոքր կաթսայի մէջ եւ վրան աւելցնել 100 մլ եռացած ջուր ու եփել ցած կրակի վրայ այնքան ժամանակ, մինչեւ որ ստացուի խիտ գանգուած մը: Վերցնել կրակին վրայէն եւ ձգել որ սառի, ապա աւելցնել քամուած ստեպոլինի հիւթն ու թթուասերը: Լաւ խառնել ու քսել մաքուր դէմքին, եւ 25-30 վայրկեան պահել: Ապա տաք ջուրով լուալ դէմքը եւ քսել խոնաւցնող քսուք: Մնացած դիմակը պահել սառնարանը: Աւելի լաւ արդիւնքի հասնելու համար կարելի է դիմակը օգտագործել երեք օր անընդմէջ: Այս դիմակը հրաշալիօրէն կը թարմացնէ դէմքը, կը հեռացնէ յոգնածութեան հետքերը եւ կնճիւղները, իսկ մորթը կը քաշուի՝ դառնալով աւելի հարթ:

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱԸ**  
**ՓԱՍՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԵՈԳԻ ԸՄՍԱՐ)**  
**ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԹՆԵՐՈՒ ԸՄՍԱՐ**  
**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**  
**ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝**  
**ԸՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680**

### ՀՄՍ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՖՈՒՏՊՈՒԼԻ ԽՈՒՄԲԸ ՅԱՂԹԵՑ ԼԱ ԳՐԵՍԵՆԹԱՅԻ SCI-ARC-ԻՆ 2-1



Շրջան է ի վեր վերապատրաստման մէջ եղող Փաստինայի Հ.Մ.Մ-ի ֆուտպոլի խումբն այժմ վերաշխուժացած է եւ լծուած կանոնաւոր փորձերու եւ բարեկամական մրցախաղերու: Վերջապէս ան գրանցուած է Լոս Անճելոսի ֆուտպոլի Լիգայի մէջ որպէս

պաշտօնական անդամ: Հ.Մ.Մ-ի վերակազմեալ ֆուտպոլի խումբը իր վերջին մրցումն ունեցաւ Լա Գրեսենթա քաղաքի մարզադաշտին վրայ ընդդէմ նոյն քաղքի SCI-ARC խումբին: Մրցումն ավարտեցաւ 2-1 արդիւնքով ի նպաստ Հ.Մ.Մ-ի:

### Ազահ եւ անամօք

#### Շարունակուած էջ 2-էն

արգելում վարչապետի որդուն՝ մասնակցելու որեւէ համայնքի, այդ թւում՝ Արտաշատի քաղաքապետի թափուր պաշտօնի համար կազմակերպուելիք ընտրութիւններին, բայց տարրական պարկեշտութիւնը պահանջում է, որ Աբրահամեանները բաւարարուեն վարչապետական ակտով եւ իրենց ընտանեկան բիզնես-գործունէութեամբ: Սակայն այս չափանիշները Հայաստանի համար չեն: Մեզանում իշխանութիւնն անամօթ է, ազահ, առանց արգելակների ու խղճի խայթի:

Ընդ որում, այս «սերնդափոխութիւնը» համակել է բոլոր համակարգերին: Անգամ մշակոյթի ոլորտում, որտեղ աւանդաբար մտաւորական բարբեր են տիրել, սկսել են բարեկամ-մտերիմներին պաշտօնների նշանակել. երէկ տեղեկացանք, որ Պատմութեան թանգարանի տնօրէնն էլ իր պաշտօնը եղբորորդուն է փոխանցել: Ցավալի է 2015 թուականին արձանագրել, որ մենք չկարողացանք դեմոկրատական, մրցակցային, ազատ երկիր կառուցել, այլ կամաց գլորվեցինք դէպի ֆէոդալական սահակա-նութեան գիրկը: «ՀՐԱՊԱՐԱԿ»

### ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆ

#### Շարունակուած էջ 16-էն

արտասանեցին Ուիլիամ Սարոյեանի «Կուզէի Տեսնել» արտասանութիւնը, ապա եօթներորդ դասարանի աշակերտները երգեցին «Սուրբերու Աչքեր» եւ «Light the Candles» երգերը առաւել եւս խորհրդաւոր դարձնելով միջոցառումը: Յետ միջօրէին տեղի ունեցաւ հայոց Յեղասպանութեան հարիւրամեակը նշող պաշտօնական ոգեկոչում եւ գործադրուեցաւ սքանչելի յայտագիր ներկայութեամբ տնօրէնութեան, ուսուցչական կազմին, ծնողներուն, հիւրերու եւ աշակերտութեան: Հանդիսութիւնը իր պաշտօնական ընթացքը ստացաւ մէկ վայրկեան յոտնկայս լուծեամբ՝ յարգանքի տուրք մատուցելով նահատակներու յիշատակին, ապա աշակերտները երգեցին Հայաստանի հանրապետութեան քայլերգն ու նահատակաց շարականը եւ ունկնդրեցին Գոնկրէսմէն Ատամ Շիֆի ուղարկած տեսաերիզ պատգամը՝ հայոց Յեղասպանութեան Հարիւրամեակին առիթով: Բացման խօսքով հանդէս եկաւ Տնօրէնուհի՝ Քոյր Լուսինա, որ ամփոփ կերպով նշեց պատմական իրողութիւններ, որոնց ընթացքին թուրքը գործադրեց ան-

մարդկային ոճիր մը մեր ազգի նկատմամբ եւ տեղահան ըրաւ զայն իր պապենական հողերէն, ապա կոչ ուղղեց աշակերտներուն որ տէր կանգնին իրենց պապենական հողերուն: Օրուան հանդիսավար՝ Տիգրան Լինտա Գանտիլեան երկուքուկէս ժամուան տեւողութեան հերթականութեամբ բեմ հրաւիրեց բոլոր աշակերտները, որոնք իրենց արտասանութիւններով, երգերով, ասմունքով եւ բեմադրութեամբ անգամ մը եւս եկան փաստելու՝ որ հայ ժողովուրդը որքան ալ հեռու իր հողէն ու հայրենիքէն իր նահատակներու յիշատակը անմահ պիտի պահէ մինչեւ որ հայ դատը գտնէ իր արդար լուծումը: Հանդիսութեան առաջին բաժնով մանկապարտէզ եւ նախակրթարան մատուցեցին օրուան պատշաճ արտասանութիւններ, երգեր մեծ ապրումով եւ առիթին պարտադրած լրջութեամբ. որ ամբողջացաւ Լուի թաճեանի կողմէ դաշնամուրի վրայ «Օրօրոցային» մեկնաբանութեամբ: Երկրորդ բաժնով հանդէս եկան հինգերորդէն վեր բոլոր աշակերտները: Օրուան խորհուրդը ներկայացուց ուսուցչուհի Լինտա Գանտիլեան, երբ աշակերտ-

### ՏԻԳՐԱՆԻ «ԻՏԱԼԸ»

#### Շարունակուած էջ 13-էն

ջուր հասցուց բոլորին եւ ամէնէն կարեւորը՝ յոյս ներարկեց բոլոր հայերուն սրտերուն: Իր հարագատներէն ստացած նիւթական օգնութիւնները բաժնեց բոլոր կարօտեալներուն: «Քանի դեռ օրը լոյս է, կատարելու եմ գիտ Ուղարկողին կամքը: Գիշերը մարդ չի կրնար աշխատիլ»: Այս ըսելով՝ կը բազմապատկէր իր ջանքերը, տարագիր հայ ժողովուրդի «ցաւերը» կիսելով եւ կարեկցելով: Երեւի Տիգրան նախագագ, թէ «գիշերը» պիտի գայ...: 1 Սեպտեմբեր 1915ին, շատերու կողքին, վեր. Տիգրան եւս վարակուեցաւ թիֆուսէ եւ անկողին ինկաւ: Եթէ անոր կեանքին բոլոր փորձառութիւնները չի կրցան իր ուժը խլել իրմէ, անորքէ հիւանդութիւնը կրցաւ: Տիգրան չէր կրնար շարժիլ այլեւս: Անշարժանալով հանդերձ Տիգրան չկորսնցուց իր «իտէալը»...: Այն «իտէալը», որ գտած էր անցնելով իր կեանքի տարբեր փորձառութիւններէն: «Ասպարէզիս մէջ ցարդ հինգէն մէկ քարոզիչ էի», ըսաւ ան, աւելցնելով. «Երբ ապա-քինիմ, հինգէն հինգ քարոզիչ պի-

տի ըլլամ»: Տիգրան չապաքինեցաւ, որպէսզի «հինգէն հինգ քարոզիչ ըլլար»: Բայց ան մինչեւ իր վերջին շունչը սիրեց իր «իտէալը»...: Իտէալը հաւատքին եւ իր տարագիր ժողովուրդին ծառայութիւնը: «Դիմացս երեք Լոյսեր կան (կ'ակնարկէր Հօրը, Որդիին եւ Սուրբ Հոգիին-Հձ), մէկն ալ զաղթականինը թող ըլլայ», ըսաւ ան: Երեսուներթ տարեկանին վեր. Տիգրան Գունտազճեան մահացաւ իր տարագիր հայ ժողովուրդին հետ: Իր գերեզմանը մնաց անյայտ, ինչպէս բոլոր տարագիրները, բայց մնաց իր «իտէալը», եւ այդ «իտէալն» ժայթքած իր շատ սիրած Լոյսը...: Լոյսը, որուն մէջէն ան տեսաւ թէ իր ժողովուրդը ու անոր քրիստոնէական հաւատքը ապրեցան, նոյնիսկ երբ ինք ու իր տարագիր ժողովուրդը մեռան...: «Հայրենասէր մըն էր Պատուելին»...: Որովհետեւ հաւատաց եւ հաւատարիմ մնաց իր հայկական «իտէալին»: Տիգրանի «իտէալը» հայուն «իտէալն» էր, որ սակարկութեան չենթարկուեցաւ, ի գին նահատակութեան: Երբ ու ինչ » երգը, որմէ ետք պատկերը ամբողջացաւ «Չեմ Մոռանայ» երգի խմբային աշխուժ երգեցողութեամբ եւ հինգերորդ դասարանէն Կալիա Օտապաշեանի մենբերով: Հանդիսութեան վերջաւորութիւնը շատ սպաւորիչ էր: Ութերորդ դասարանի ներկայացուցած պատկերով, որ հայերէնի ուսուցչուհի հին աշակերտներու հետ միասնաբար պատրաստած էր ներկայացնելով թուրք դեկավար մը հոգեկան վիճակը ի տես Ջարդուած, բայց յարուցեալ հայ ժողովուրդի ծաղկումին, Հայաստանի եւ պիւրեքի մէջ: Մենախօսութիւնը կատարեց Մեղեդի Տէր Պօղոսեան մեծ ապրումով եւ իր սքանչելի բեմական յատկութիւններով մարմնացնելով թուրքը իր ամենայն տիպի մանրամասնութեամբ, որ հանդիսատեսին պարտադրեց անգամ մը եւս ըսելու՝ «...Մեր ձայնը չի լուր, պիտի չլուէ, մենք արդարութիւն կը պահանջենք...» Մեղեդիի չափ խօսուեն եւ սպաւորիչ էին նաեւ միւս աղջիկները, որոնք կը ներկայացնէին հայուն ձայնը: Հանդիսութիւնը այդ օր բաւական ուշ վերջ գտաւ, բայց ոգեկոչուած կը շարունակուէր: Յարիւր օր՝ Ապրիլ 24-ին միջակարգի բոլոր աշակերտները, վարժարանիս Տնօրէնութիւնը, ուսուցիչները եւ ծնողները մասնակցեցան Հարիւրամեակի պահանջատիրութեան քայլարշաւին, որպէս Քալիֆորնիոյ հայ վարժարաններէն մէկը իր տեղը գրաւելով Քալիֆորնիոյ Հայ աշակերտութեան կողքին: Եւ տակաւին վարժարանս այս տարուան տեւողութեան պիտի շարունակէ իր Յեղասպանութեան ուղղուած բոլոր ծրագիրները ամբողջացնել մինչեւ տարեշրջանի ավարտը:

ներուն հէքիաթ մը պատմելով ներկայացուց հայ ժողովուրդի՝ մեր պապերու խաղաղ ապրելակեպը իր բարբեր հողերուն վրայ, հայ գիւղացիի աշխատատիրութիւնն ու հողի հանդէպ ունեցած պաշտամունքը եւ սերմնացանը ու տաք արեւին ներգործումը այդ սերմերուն եւ աճումը, բայց՝ օր մըն ալ Գարուն էր ու ձիւն տեղաց... 1915ի Գարունն էր, տեղացող ձիւնը մեր պապերը ցրուեց աշխարհով մէկ եւ մէկուկէս միլիոն հայ մարդ նահատակ դարձաւ: Եւ որպէսզի պատմութիւնը չշարունակուի նոյն ձեւով՝ Լինտա Գանտիլեան շեշտեց պահանջատիրութեան գաղափարին վրայ եւ ըսաւ «...Մենք այսօր պիտի չիշենք այս բոլորը եւ պիտի պահանջենք, որպէսզի ապագային օր մը ձեզմէ մէկը իմ տեղս կանգնած խօսք առնէ՝ եւ ըսէ՝ չիշեցինք, պահանջեցինք ու վերադարձուցինք...» խօսքը շարունակուեցաւ մանկապարտէզի աշակերտուհի Մէրի Յովակիմեանի դաշնամուրի վրայ «Գարուն ա» նուագով եւ ամբողջացաւ ութերորդ դասարանի աշակերտներուն Պարոյր Սեւակի «Անլուրի Զանգակատուն» էն պարբերութիւններու ասմունքով եւ վերջ գտաւ Կոմիտասի կիսանդրիին մեխակներ գետեղելով: Հանդիսութիւնը շարունակուեցաւ երաժշտական խօսուն ներկայացումով մը, պատրաստութեամբ վարժարանիս երաժշտութեան ուսուցչուհի՝ Վարդուհի Պաղտասարեանի, որ իր երաժշտական փորձառութեամբ, կարողութիւններով ու հմտութեամբ բեմահարթակ բերաւ միջակարգի աղջիկները որպէս ֆետայիններու մայրեր. անոնք երգեցին «Չար թիր Լաօ» անոնց միացան գինուորական տարագով վարժարանիս մէջ երկու եղբայր եղող աշակերտները մեկնբանելով «Աղ-

### ՆՈՒԻՐԱՏՈՒՌԻԹԻՒՆ

Գնահատելով Մասիսի Շաբաթաթերթի բովանդակութիւնը եւ մարտնչելով յարատեւ վերելք եւ յաջողութիւն: Տէր եւ Տիկին Վարդան Պէքէբեան կը նուիրեն 300 տոլար Մասիսի բարգաւաճման ֆոնտին:

### ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻ ՆՇՈՒՄԸ

Շարունակում է 16-էն

Թացաւ կեանքը Մերտինեան վարժարանէն ներս՝ 2014-2015 տարեշրջանին, յատկապէս Յունուար ամիսէն սկսեալ: Գործադրուեցան կամ իրագործուեցան հետեւեալ աշխատանքները:

- Դեկտեմբեր 8, 2014ին, Հայ Դատի Յանձնախումբին կողմէ Մերտինեան վարժարան այցելեց Պր. Մորիս Միսաք Քէլէշեանը, ան տեսակերի մը ցուցադրելով, Զ. - Ը. կարգերու աշակերտներուն, խօսեցաւ Near East Relief կազմակերպութեան բերած անգնահատելի օժանդակութեան մասին՝ հայկական Յեղասպանութենէն մագապուրծ ազատած աւելի քան 100.000 որբեր փրկելու գործին: Ապա, ուսուցիչներ եւ աշակերտներ միասին ճաշակեցին կէսօրուան ճաշը, որ որբերու ճաշացանկէն առնուած ճաշ մըն էր:

- Յունուար 2015էն սկսեալ, վարժարանի միջնակարգի բաժնի աշակերտներէն իւրաքանչիւրը, ամէն շաբաթ դպրոց բերաւ հայութեան, Հայաստանի կամ հայկական ցեղասպանութեան մասին տեղեկութիւններ. սկսած էր «100 Days Facts» ծրագիրը. այսպէս Փետրուար 12էն մինչեւ Ապրիլ 23, 2015, ամէն Ուրբաթ առաւօտ, ամբողջ աշակերտութեան կարդացուեցան այդ տեղեկութիւններէն ընտրուած 10 հատ, որոնք ապա որմագրերու վերածուած՝ տեղաւորուեցան վարժարանի տարածքին, պատերու կամ ցուցատախտակներու վրայ:

- Փետրուար ամսու սկիզբը հրապարակ հանուեցան ցեղասպանութեան 100 ամեակը նշող եւ վարժարանի անունը կրող հայ պիկներ. այս շապիկները որպէս համագրեալ հազուեցան աշակերտներու, ուսուցիչներու եւ ծնողաց կողմէ մինչեւ Ապրիլի վերջը:

- Յունուար 2015էն սկսեալ, շաբաթ մէկ օր, առաւօտեան պաշտամունքի պահը յատկացուեցաւ աշակերտութեան ներկայացնելու ցեղասպանութեան յայտնի գոհերէն կամ ներկայ ժամանակներու հանրածանօթ հայերէն մին:

- Դասարանները զարդարուեցան աշակերտական ձեռագիր աշխատանքներով, որոնք կը պատկերացնէին Յեղասպանութիւնը եւ հայուն վերածնունդը՝ աշակերտի տեսանկիւնէն դիտուած:

- Փետրուար եւ Մարտ ամիսներու ընթացքին, Մերտինեան վարժարանի Ա.-Ը. կարգերու իւրաքանչիւր աշակերտ գրեց եւ հրատարակեց 2 ինքնագիր գրութիւններ՝ գիրքեր, (1 անգլերէն եւ 1 հայերէն լեզուներով), որոնց նիւթը կամ առնուած էր Յեղասպանութենէն եւ կամ կապուած էր իրաւունքի, պահանջատիրութեան գաղափարներուն: Ապրիլի 15-16ին այդ գիրքերը ցուցադրուեցան վարժարանի «Արամ եւ Անայիս Տ. Պուրլուրճեան» սրահին մէջ:

- Միջնակարգի աշակերտները գրեցին նաեւ անգլերէն լեզուով շարադրութիւններ՝ Յեղասպանու-

թենէն վերապրած հայ կիներու մասին: Ասոնցմէ ոմանք տեղ պիտի գտնեն հայկական Յեղասպանութեան 100 ամեակին նուիրուած՝ «Հայ Կին» կազմակերպութեան հրատարակելիք հատորին մէջ:

- Մարտ 11, 2015ին, յայտնի հեքիաթասաց Տիկ. Ալիծ Աղպապեանը Մերտինեանի աշակերտութեան ներկայացուց՝ իրեն յատուկ երգ ու տաղով, իր հեղինակութիւններէն «Մալլապատիկ»ը, որ Յեղասպանութենէն վերապրող, Հալէպի մէջ ապաստան գտած առաջին սերունդին առօրեան կը ներկայացնէ:

- Մարտ 15ին, Արարատ Տան մէջ, ճաշկերոյթի մը ընթացքին մեծարուեցան 11 հայեր, որոնք 100 տարեկան կամ աւելի մեծ էին:

Մերտինեանի Ը. կարգէն 2 աշակերտուհիներ մասնակցեցան մեծարման այս հանդիսութեան. անոնցմէ մէկը կարդաց մեծարեալներէն մէկուն կենսագրական գիծերը, իսկ երկրորդը արտասանեց բանաստեղծութիւն մը:

- 18 Մարտին, Մերտինեանի Գ. - Ե. կարգերու աշակերտները այլ հայկական վարժարաններու աշակերտներու հետ այցելեցին Մոնթեպէլլոյի յուշարձանը, ուր գործադրուեցաւ Յեղասպանութեան 100 ամեակին նուիրուած կոկիկ յայտագիր մը:

- Ապրիլ 17-19, մեր աշակերտները, այլ հայկական վարժարաններու աշակերտներու կողքին, շուրջ 60 արուեստի գործերով մասնակցեցան Յեղասպանութեան 100 ամեակի առիթով կազմակերպուած Արուեստի Յուշահանդէսին:

- Ապրիլ 17ին, իւրաքանչիւր մերտինեանցի ստացաւ, հայրենիքէն եկած անմոռուկ կրծքանշանը:

- Ապրիլի 21ին Ե.-Ը. կարգերու աշակերտները այցելեցին Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի առաջնորդարանը, ուր համակարգիչներով այցելեցին եւ ծանօթացան 5 հայկական վանքերու:

- Ապրիլ 22ին վարժարանս ունեցաւ հայոց Յեղասպանութեան 100 ամեակին նուիրուած յուշահանդէսը, որու ընթացքին Զ.- Ը. կարգերու աշակերտները, երգերու, իմբալիան արտասանութիւններու եւ մեկնաբանական պարերու միջոցաւ անմահացուցին մեր մէկ ու կէս միլիոն նահատակներու յիշատակը:

- Ապրիլի 24ին, 100 հազարէն աւելի հաշուող այլ հայրերիներու հետ, մերտինեանցիները մասնակցեցան «Արդարութեան Քայլարշաւ»ին:

- Եւ վերջապէս, Մայիս 19, 2015ին, Մերտինեանի մէջ ելոյթ պիտի ունենայ երգչուհի Ալին Ամիրեան, անմոռուկին մասին իր նոր երգով:

Կը հաւատանք, որ վերոյիշեալ բոլոր գործունէութեանց միջոցին, մեր աշակերտները սորվեցան շատ բան, բայց մանաւանդ համոզումով եւ ամբողջ սրտով վերանորոգեցին իրենց սրբազան ուխտը՝ մնալու Հայ, ըլլալու պահանջատէր իրենց ազգային իրաւունքներուն, հողին, եւ ծառայելու Աստուծոյ, իրենց ժողովուրդին ու համայնքին:

### ԲԱՐԻ ԵՐԹ

Շարունակում է 16-էն

ձան Ֆիլեան 2008-ի շրջանաւարտ, որոնք ձեռնհասօրէն վարեցին օրուան յայտագիրը հաճելի եւ յիշատակելի մէջբերումներով, գրաւելով ներկաներուն ուշադրութիւնը:

Ամերիկեան եւ Հայկական ազգային քայլերգները գրաւիչ ձայնով կատարեց Սուրէն Մկրտչեան: Վարժարանիս Ը. կարգէն Քրիստինա Շիրանեան հայրենաշունչ ոգիով արտասանեց Գէորգ էմինի «Մենք»ը:

Բացման աղօթքը կատարեց Վեր. Վաչէ էքմէքճեան: Ապա հրամցուեցաւ հայկական համադամ աղանդերներ եւ խորոված, սեղաններուն շուրջ ստեղծելով մտերմիկ եւ հաճելի պահեր:

Առիթը ունեցանք վայելելու տեսաներգի ցուցադրութիւնը, ուր հիմնադիրներ, տնօրէններ (նախկին եւ այժմու) բազմավաստակ ուսուցիչներ եւ բարեկամներ իրենց սրտաբուխ խօսքերը արտայայտեցին: Ներկաները դիտեցին նաեւ անցեալի եւ ներկայի յիշատակելի նկարները:

Յատուկ գնահատանքի արժանացաւ հոգաբարձական կազմէն Աբրահամ Հալէպլեան իր 25ամեայ ծառայութեան համար: Հոգաբարձութեան խօսքը ներկայացուց Վահագ Ակոճեան, որ խրախուսիչ խօսքերով քաջալերեց ներկաները, որոնք միշտ նեցուկ կանգնած են Սահակ-Մեսրոպ Վարժարանին եւ ինդրեց, որ նոյն թափով շարունակեն օժանդակել Սահակ-Մեսրոպին նիւթապէս եւ բարոյապէս, դպրոցիս վերելքին եւ բարեգարգման աշխատանքներուն համար:

Երաժշտական մասնակցութիւն կատարուեցաւ Կրէկ Հօշարեանի եւ իր երրեակին հետ, որոնք ներկայացուցին գողորիկ, հոգեշունչ եւ հայրենասիրական երգեր, ոգեւորելով ներկաները:

Պահն էր լսելու օրուան բանախօսը՝ Զաւէն Խանճեան, որ գործադիր տնօրէնն է Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան: Բանախօսը իր սրտի խօսքը արտայայտեց հարազատ զգացումներով: Ան յիշեց Սահակ-Մեսրոպ Վարժարանի առաքելութիւնը, որ Արարիչի փառքը հիւսող կրթական օճախ մըն է, ուր հայ մանուկներ կը դաստիարակուին հայեցի ու քրիստոնէական շունչով:

Առիթը ունեցանք վայելելու նաեւ երկու հայկական պարեր Տաւիղ պարախումբի հեղաճկուն աղ-

ջիկներու կատարումով:

Պահն էր հատելու 35 ամեակի կարկանդակը: Տիկ. Աստուրեան հրաւիրեց ճաշկերոյթի հովանաւորները՝ Տէր եւ Տիկ. Սարգիս եւ Նունէ Սէփէթճեաններ, Տէր եւ Տիկ. Էտի եւ Գարինա Բելենկեաններ, եւ Տէր եւ Տիկ. Միքայէլ եւ Արփի Եոսուֆեաններ՝ որոնց բացակայութեան պատճառով հրաւիրուեցաւ գաւազը՝ Տէր եւ Տիկ. Արամ եւ Թամար Եոսուֆեաններ: Բեմ հրաւիրուեցան նաեւ այն նուիրատուները, որոնք իրենց նիւթական մասնակցութիւնը բերին այս երեկոյի յաջողութեան: Բոլոր նուիրատուներն ալ ստացան համապատասխան յիշատակի նուէրներ յանձնախումբին կողմէ:

Յատուկ գնահատանքի խօսքեր ուղղուեցան դպրոցիս վերելքին եւ յաջողութեան ծառայողներուն, բարերարներուն, որոնց բարոյական եւ տնտեսական ներդրումով դպրոցս կանգուն մնացած է, գաղութիս նոր սերունդին ջամբելով ազգային եւ կրօնական գիտելիքներ եւ դաստիարակութիւն:

Այժմու տնօրէն՝ Պր. Յովսէփ Ինճէճիքեան, հակիրճ կերպով ընթերցեց երեք պարզեւատուող ուսուցիչներու կենսագրականները: Տիկ. Մարի Մարաշլեան եւ Տիկ. Լուսի Ստեփանեան յուշատախտակներ ստացան իրենց 20 տարիներու անձնուէր ծառայութեան համար: Իսկ Տիկ. Ռիթա Դաւիթեան յուշատախտակ ստացաւ իր 30 տարուայ ծառայութեան համար, որպէս ուսուցչուհի եւ հոգեւոր տեսուչ:

Յայտագրի աւարտին ելոյթ ունեցան Ե. Կարգի աշակերտները, որոնք հոգեշունչ եւ հայաշունչ հայկական երեք երգերով երեկոն հասցուցին գագաթնակէտին:

Եզրափակիչ խօսքերով հանդէս եկաւ Տէր Պողոս ՔՏՆՅ. Պալ-թայեան, որ միեւնոյն ատեն փոխանցեց Առաջնորդ՝ Մուշեղ Արք. Մարտիրոսեանի բարեմաղթութիւնները: Ապա Վեր. Յովսէփ Մաթոսեանի հետ միասնաբար կատարեցին օրհնութեան աղօթքը եւ պահպանիչով երեկոն փակուած յայտարարուեցաւ, ուր ներկաները գոհունակ սրտով արձակուեցան, իրենց հետ տանելով անցեալի յիշատակներ Սահակ-Մեսրոպ Վարժարանէն:

Բարի երթ Սահակ-Մեսրոպ Վարժարանին եւ նորանոր յաջողութիւններ գալիք յաջորդող տարիներուն, նոր մարտահրաւէրներով հասնելու բարձունքներու:

### ՍԱՀԱԿԵԱՆԻ ՕՐ

Սահակեան Սանուց Միութիւնը յատուկ յիշատակի ցերեկոյթ կազմակերպած է յաւէտ բաժնուած իրենց սիրելի տնօրէն եւ ուսուցիչ՝ Տիար Պէպօ Միմոնեանի մահուան քառասունքի, վաստակաւոր ուսուցիչ՝ Տիար Յովհաննէս Հաննէսեանի երկրորդ տարելիցին, ինչպէս նաեւ, իրենց վարչական անդամներ՝ Տիար Նազարէթ Աջապահեանի եւ Տիար Վարդիվառ Շնորհաւորեանի առաջին տարելիցներուն առիթներով: Հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, Կիրակի, 17 Մայիս, 2015ին, որմէ ետք Սահակեանցիներով պիտի մէկտեղուինք Փասատինայի «Սողանալեան» սրահին մէջ, 1060 North Allen Avenue, Pasadena CA 91104:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

**SEROP'S CAFE**  
GREEK & LEBANESE FOOD  
SERVING BATON ROUGE SINCE 1979

**«ՔԱԶ ՆԱԶԱՐ» ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ**  
Ամէն Կիրակի  
Երեկոյեան ժամը 10:00-ից 12:30  
Կլէմտայի 380-րդ կայանից

# Յ Ո Ւ Շ Ա Տ Օ Ն



Նուիրուած

## Հայ Ազգի

Քսան Հնչակեան Անմահներու

նահատակութեան 100-րդ Տարելիցին

Կազմակերպութեամբ՝

Ս.Դ.Հ.Կ. Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմինի

ԲԱՆԱԽՕՍ

Պատմաբան՝ **Սարգիս Հացպանեան**

խօսք կ'առնէ

Ս.Դ.Հ.Կ.ի Կեդրոնական Վարչութեան Ատենապետ՝  
**Յակոբ Տիգրանեան**

Գեղարուեստական ճոխ Յայտագիր

Տեղի կ'ունենայ


**Կիրակի Յունիս 14, 2015**

Կ.Ե. Ժամը 5:30-ին

Կլէնտէյլի Ալէքս Թատերասրահէն ներս  
216 N. Brand Blvd. Glendale, CA 91203



Մուտքը Ազատ



Զեր տեղերը ապահովելու համար հեռաձայնել

(818) 391.7938